Ի Հայրապետութեան
Տ. Տ. Գարեգնի Երկրորդի
Ծայրագոյն Պատրիարքի
եւ
Կաթողիկոսի Ամենայն Հայոց

/

Նվիրվում է Հայոց գրերի գյուտի
1600-րդ տարեդարձին

Գրաբարից աշխարհաբարի փոխադրեց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբան,
Բերդ քաղաքի եւ տարածաշրջանի
հոգեւոր հովիվ Տ. Սահակ աբեղա
Շաքարյանը

/

Երեւան, 2005 թ.

Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով ընթերցասեր հավատացյալներին ենք ներկայացնում երանաշնորհ եւ վշտակոծ հայրապետ Սիմեոն Ա Երեւանցու (կթղ. 1763-1780 թթ.) Աղոթագրքի աշխարհաբար թարգմանությունը:

Այն կազմված է դասական մեր աղոթագրքերին բնորոշ կանոնական ձեւով: Դրանք մեծակական ողբով հառաչանքներ են ի խորոց սրտի՝ ուղղված Սուրբ Երրորդությանը, Սուրբ Մարիամ Աստվածածնին, Փրկչական Սուրբ Խաչին, Հայոց Եկեղեցուն եւ ազգին, Սուրբ Գիրգոր Լուսավորչին եւ Հայաստանյայց Եկեղեցու բոլոր սրբերին: Ավելի քան երկու դարերի հեռավորությունից հնչող այս աղոթքները գրաբարյան իրենց վսեմությամբ եւ նույնքան պարզությամբ այսօր եւս արտահայտում են հայ մարդու հոգեկան ներքին ապրումներն ու ազգային մտահոգությունները: Աղոթագիրքը լավագույնս բնորոշել է հենց ինքը՝ Սիմեոն Երեւանցին, եզրափակող վերջին աղոթք–հիշատակարանում հոգին անվանելով անգին, իսկ աղոթքները՝ հոգու կեցուցիչ:

Հայոց աշխարհի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար երերուն եւ անհաստատ ժամանակներում գրված այս աղոթքները մեզ մղում եւ թելադրում են երբեք չհուսահատվել աղոթական կյանքում եւ շարունակ դիմել առ Աստված՝ հուսո փարոս ունենալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ Միածնաէջ համազգային սրբավայրը մեր:

Թող այս հնաբույր աղոթքները մաքրեն մեր կյանքը, հարստացնեն մեր հոգիները՝ մեզ սնելով անցյալի սրբազան հայրերի ավանդած հոգեւոր անսպառ ժառանգությամբ՝ ի մխիթարություն ազգիս հայոց եւ ի պարծանս Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու:

ԱՂՈԹԱԳԻՐՔ

որ կոչվում է հոգեւոր զբոսարան:

Գրված՝ Ամենայն Հայոց
Սիմեոն Վշտակիր Կաթողիկոսի
կողմից լուսավորչակրոն անձանց
համար՝ ի փառս Աստծո
եւ տպագրված նույն սրբազան
Հայրապետի հրամանով Սուրբ
Գրիգոր Լուսավորչի անվան
նորակառույց տպարանում:

Փրկչի ՌՁՀԲ (=1772) եւ մեր՝
ՌՄԻԱ (= 1221) թվականին:

Այս փոքրիկ գրքույկի առաջաբանը, որտեղ փոքրինչ խոսվում է աղոթքի որպիսության մասին

Այստեղ ցանկանում եմ համառոտ խոսել աղոթքի որպիսության եւ անհրաժեշտության մասին: Համառոտ, որովհետեւ նախ գրքույկի չափն է այդպես պահանջում: Երկրորդ՝ որովհետեւ թե՛ անցյալի եւ թե՛ գալիք բոլոր աստվածաբանները, եթե ի մի գալով կամենան խոսել աղոթքի մասին, չեն կարող նրա զորության մասին ամբողջապես խոսել, քանի որ, ինչպես հայտնի է, թե՛ Հին եւ թե՛ Նոր Աստվածաշունչ բոլոր գրքերում եղած հրաշքներն ու մեծագործություն-

ները աղոթքի միջոցով են եղել։ Ուստի, ըստ այս փոքրիկ գրքույկի պահանջի, մեր նպատակի մասին համառոտ կասենք եւ կվերջացնենք։ Արդ, երբ մարդն Աստծո պատվիրաններին չհնազանդվեց եւ ամենաբարելի դրախտից զրկվեց ու ողբի արժանի այս աշխարհն ընկավ, հոգու եւ մարմնի երեք գլխավոր պակասությունների, այսինքն՝ նեղության, աղքատության եւ հիվանդության հանդիպեց, իսկ Քրիստոն՝ մեր Տերը, ով ամենակարող Փրկիչ է, ամենահարուստ Թագավոր եւ ամենիմաստ Բժիշկ, այս երեք պակասությունների համար դեղ հնարեց, որովհետեւ սատանայի կողմից նեղվածներին եւ գերվածներին Իր պատվական արյամբ ազատեց, ինչը հայտնապես դիվահարներին ցույց տվեց։ Աղքատներին բարությամբ լցրեց՝ ասելով. «Ով գա Ինձ մոտ, չի

քաղցի», որն էլ Հայտնապես Հինգ Հազարին ցույց տվեց, եւ Հիվանդներին պես-պես Հրաշքներով բժշկեց, ինչը Հայտնապես ցավագարներին ցույց տվեց։ Ավետարանի Համաձայն՝ «Բազում զորութիւն էր ելնում Նրանից եւ բժշկում բոլորին», քանի որ մարմնով Հիվանդներին խոսքով էր բժշկում, իսկ Հոգով Հիվանդներին՝ Հոգեւոր դեղերով, այսինքն՝ պահքով, ողորմութիւամբ, խոնարհութիւամբ, Հալածանքներով, խաչով եւ այլ առաքինի գործերով, ինչպես ասում էր՝ նեղ եւ անձուկ է ճանապարհը, որ բժշկում է մեղավորին եւ տանում դեպի կյանք։ Բայց մինչ այս կսկծեցուցիչ դեղորայքները գործածում էր, մարմնասեր եւ անարի մարդիկ տրտնջում էին Նրա դեմ՝ ասելով, թե՝ դառն են Քո այդ դեղերը. եթե այդպես լինի, ո՞վ կարող է փրկվել։ Դրա Համար էլ բոլո-

րին ամեն ինչում պիտանի, ամեն ցավի ամոքիչ դյուրին մի դեղ, այսինքն՝ աղոթք անել սովորեցրեց, ասելով, թե՝ «Ինչ էլ որ կամենաք, խնդրեցե՛ք եւ կստանաք», ինչպես նաեւ՝ «Աղոթեցե՛ք փորձության մեջ չընկնելու համար»:

Ահա քեզ հեշտագյուտ, դյուրին, ամեն ինչում պիտանի եւ միշտ առձեռն պատրաստ մի դեղ, որին ոչ մի արգելք չկա եւ որը որեւէ դժվարություն չունի: Քանզի, եթե պահքի համար կարող ես պատճառաբանել, թե տկար եմ եւ այլն, ողորմության համար ասել, թե աղքատ եմ՝ ի՞նչ տամ, ճգնության, հալածանքների, չարչարանքների, հավատի եւ այսպիսի ավելի դժվար, առաքինի գործերի համար պատճառաբանել, թե խիստ են, չեմ կարող դիմանալ, աղոթքի համար բնավ

որեւէ պատճառ չունես բերելու, որովհետեւ որեւէ մեկը՝ թէ՛ ծեր, թէ՛ երիտասարդ, թէ՛ հարուստ, թէ՛ աղքատ, թէ՛ առողջ, թէ՛ հիվանդ, ինչ հասակում, ինչպիսի կացութեան մեջ, ինչ ժամանակ եւ ինչպիսի տեղում էլ լինի, եթե կամենա, կարող է աղօթել: Ուրեմն, տե՛ս, թե որքա՜ն նախատելի է աղօթքի մեջ ծուլացողը, որ ամեն ինչի կարոտ եւ երեւելի ու աներեւույթ փորձութիւններով շրջապատված լինելով՝ չի դիմում այնպիսի Տվողին, Որն Ինքն է հորդորում, թե՝ «Խնդրեցե՛ք եւ կտրվի», եւ թե՝ «Եկե՛ք Ինձ մոտ բոլոր հոգնածներդ եւ նեղյալներդ, եւ Ես կհանգստացնեմ ձեզ»: Ո՛վ եղբայր, լսի՛ր, ուրեմն, այդպիսի առատապարգեւ Կանչողին, մոտեցի՛ր Նրան եւ խնդրի՛ր ինչ էլ որ կամենաս: Եթե հիվանդ ես, աղօթքի կանգնի՛ր, որովհետեւ Եզեկիան ա-

ղոթքով ազատվեց Հիվանդությունից, ավելացրեց իր կյանքի օրերը եւ ազատվեց Ռափսակից: Եթե նեղության մեջ ես, աղոթի՛ր, որովհետեւ երեք մանուկներն աղոթքով փրկվեցին կրակից: Եթե մեղավոր ես, աղոթքի կանգնի՛ր, որովհետեւ Նինվեացիները, Մանասեն եւ շատ ուրիշներ աղոթքով արդարացան եւ Աստծո բարկությունը քաղցրության փոխեցին: Եվ եթե որեւէ կարիք ունես, աղոթքով խնդրի՛ր, որովհետեւ Ինքը Պարգեւողն է ասում. «Խնդրեցե՛ք, եւ կտրվի, որովհետեւ ով խնդրում է՝ ստանում է»: Ըստ սուրբ վարդապետների, ինչպես որ երկիրը կարիք ունի երկնքի, որպեսզի նրանից ցող, անձրեւ, ջերմություն, լույս եւ այլ ներգործություններ ընդունի, որովհետեւ առանց սրանց չի կարող գոյատեւել, այնպես էլ մարդն աստվածային զանազան շնորհների եւ

օգնությունների կարիքն ունի ու առանց նրանց կարծես մեռած է հոգով, թեպետ եւ կենդանի լինի մարմնով։ Ուրեմն, ինչպես աղքատները դիմում են մեծատուններին, հիվանդները՝ բժիշկներին, անկարողները՝ կարողներին, ծարավինները՝ աղբյուրին, այնպես էլ մարդը, լինելով ամեն ինչի կարոտ եւ հոգով ու մարմնով տկար, պարտավոր է միշտ Աստծուն փնտրել եւ Նրանից օգնություն հայցել։

Ուրեմն, իմացե՛ք, որ աղոթքի տեսակները երկուսն են, այսինքն՝ ընդհանրական եւ առանձնական։ Ընդհանրական աղոթքը վճարումն է մեր ընդհանուր պարտքերի, որ մենք բոլորս միասին պարտք ենք Աստծուն, քանի որ Նա մեզ ոչնչից ստեղծեց, մեզ բանական արարեց, սատանայի գերությունից

վերստին փրկեց եւ Հարութիւն տվեց մեղքերի մեռելութիւնից, Հանապազ պահպանում է մեզ եւ բավարարում մեր հոգու եւ մարմնի կարիքները: Այս ամենը մեզ վրա որպես պարտքեր են, եւ կարծես այս պարտքերը վճարում ենք այն ընդ-Հանրական աղոթքներով, երբ ա-մենքս Հաստատված ժամին գնում ենք եկեղեցի եւ միաբանութիւամբ ա-ղոթում: Իսկ առանձնական ա-ղոթքն այն է, որ ընդՀանրական ա-ղոթքից բացի, երբ եւ ուր էլ մենք Հավաքված լինենք, Աստծուն դի-մենք: Ուրեմն, իմացի՛ ր, որ ընդՀան-րական աղոթքով թեեւ վճարում ենք մեր պարտքերը, ինչպես որ ասա-ցինք, սակայն սա մեզ Համար այն-քան էլ մեծ շնորհ եւ Հավատարմու-թիւն չէ, որովհետեւ միայն մեր պարտքերն ենք վճարում, ինչպես մեկը, որ Հինգ դահեկան պարտք

վերցնի մեկից եւ հետո վճարի նրան այն նույն հինգ դահեկանը: Արդ, նա տվողին ի՛նչ շնորհ արեց, որովհետեւ ինչ վերցրել էր, այն վճարեց: Արդ, պարտապանի համար մեծ շնորհն ու հավատարմությունն այն է, որ պարտքը վճարելիս մի բան ավելացնելով՝ ընծայի պարտատիրոջը: Այդ դեպքում նաեւ պարտատերը շոյված կզգա եւ կրկին խնդրելիս ավելին կտա նրան: Այսպես էլ մենք, եթե ընդհանրական աղոթքներով մեր պարտքերը վճարելիս առանձին եւս դիմենք Աստծուն եւ Նրան մի հատուկ աղոթք ավել մատուցենք (որը եւ առանձնական աղոթքն է), այդ դեպքում կկոչվենք հավատարիմներ եւ կկարողանանք քանքարաշահ ծառայի նման ասել. «Տե՛ր, հինգ քանքար տվեցիր ինձ. ահա հինգ քանքար եւս դրա վրա շահեցի»: Այդ դեպքում Աստված էլ մեր հանդեպ

բարեհաճ գտնվելով կասի. «Հավատարի՛մ ծառա, որովհետեւ այդ փոքրի մեջ հավատարիմ եղար, շատի վրա քեզ կկարգեմ։ Մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ»։ Եվ թե՝ «Ով ունի՝ նրան կտրվի եւ կավելացվի»։ Այսինքն՝ քո անցավոր կյանքից հետո քեզ նաեւ հավիտենական կյանքը կտրվի։ Արդ, ինչպես ասացինք, երկու տեսակ աղոթողների վարձատրությունն այս է։

Իսկ նրանց մասին ի՛նչ ասենք, ովքեր ո՛չ ընդհանուրի հետ են աղոթում եւ ո՛չ էլ՝ առանձին։ Նրանց մասին չէ՞, արդյոք, Աստված գանգատվում Դավթի միջոցով, թե «Ով ուտում էր իմ հացը, ինձ խաբեց»։ Հիրավի, մի քրիստոնյա, որ Աստծո տուն չի գնում, Աստծո անունը չի հիշում, Նրան չի դիմում եւ բերանով ասում է, թե ես

քրիստոնյա եմ եւ Քրիստոս Աստծուն եմ պաշտում, նա Աստծուն խաբում է, որովհետեւ Աստծո բարիքներն է վայելում, սակայն իր մարմնին ու սատանային է հետեւում եւ նրանց պաշտում: Անբան անասունը ճանաչում է իրեն կերակրող տիրոջը, միշտ շրջում նրա տանը եւ չի հեռանում նրանից, իսկ աղոթքի մեջ ծուլացողը, բանական մարդ լինելով հանդերձ, ո՛չ իր բարերար Աստծուն է ճանաչում, ո՛չ Նրա անունն է հիշում եւ ո՛չ էլ նայում Նրա տանը, որ եկեղեցին է: Որպես նախատինք այնպիսիներին՝ Աստված Եսայու միջոցով ասում է. «Ճանաչեց եզը իր տիրոջը, եւ էշը՝ իր տիրոջ մսուրը, իսկ Իսրայելն ինձ չճանաչեց, եւ իմ ժողովուրդն ինձ չմտաբերեց»: Այսպիսի աղոթազուրկ անձինք թող մտածեն, ուրեմն, թե Դատաստանի ժամանակ Քրիստոսի

առջեւ ինչպես են կանգնելու, ինչ պատասխաններ են տալու եւ կամ որ դժոխքն է նրանց կլանելու։ Ան-տարակույս, նրանց պատահելու է այն, ինչ պատահեց Հիմար կույսե-րին, ովքեր մինչ բախում էին դուռն ասելով. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ», լսում էին Քրիստոսի պատաս-խանը, թէ՝ «Չեմ ճանաչում ձեզ, հե-ռու մնացէ՛ք ինձնից», եւ թէ՝ «Ան-ծյալնե՛ր, հեռացէ՛ք ինձնից դէպի Հավիտենական Հուրը, քանի որ մինչ ես ողորմութեամբ կանչում էի ձեզ՝ ասելով, թէ եկէ՛ք դէպի ինձ, խնդ-րեցէ՛ք եւ կտանաք, բախեցէ՛ք եւ կբացվի ձեզ, դուք բնավ չէիք լսում եւ չէիք գալիս ինձ մոտ եւ չէիք ճա-նաչում ինձ։ Այժմ էլ ես եմ ասում, թէ չեմ ճանաչում ձեզ»։ Նման բա-ներից թող փրկի մեզ նույն Ինքը՝ մեր Քրիստոս Աստված։ Արդ, սիրե-լինե՛ս, թեպետ անհարմար էր, որ

մենք այսքան երկարաբանեցինք, սակայն պատասխանատվությունը, որ մեզ վրա է, ստիպեց գրել այնպիսիների համար, որ մեր ազգի մեջ կան, ովքեր ավելի անմտանալով քան կենդանիները՝ եկեղեցու դուռը եւ աղոթքի ժամը չեն իմանում, խաչակնքվել չգիտեն, Աստծո անունը չեն հիշում եւ չեն աղոթում, անգամ չգիտեն, թե ինչի են կոչված եւ իրենց վախճանը որտե՞ղ է ավարտվելու: Ովքեր ոչ միայն իրենց համար են կորուստ պատրաստում, այլեւ իրենց զավակների ու ընտանիքի, որովհետեւ ինչ որ հայրն է անում, նմանապես որդին էլ նրա նման է կատարում: Այս պատճառով այսքան երկարաբանեցինք, որ այնպիսիներն զգուշանան, իսկ ես էլ՝ ազատվեմ խղճմտանքից եւ պարտքից:

Եվ արդ, ձեզ եմ ասում, ի՛մ սիրելիներ, քանի որ աղոթքը մարդուն այսքան անհրաժեշտ է, պիտանի եւ օգտակար ամեն ինչում, մանավանդ՝ ներկա ժամանակում, ինչպես Հայտնի է բոլորին, ուստի ես՝ մեղավորս ու կարոտս ձեր աղոթքներին, եւ ձեր՝ իմ օրհնյալ ազգի անարժան տեսուչս, Սուրբ Գրքերից ժողովեցի աղոթքի այս համառոտ խոսքերը, դրեցի այս փոքրիկ գրքում եւ, որպես նորաբողբոջ եւ անուշահոտ մի ծաղիկ կամ դեռահաս եւ նախախայծ մի պտուղ՝ ձեր հոգեւոր եւ աստվածատունկ այգուց առաջացած, եւ կամ որպես մի նոր օրհնություն՝ Էջմիածնի այս Սուրբ Աթոռից, ընծայեցի քեզ, իմ հարազատ ազգ, որը դուք հատուկ սիրով

եւ ուրախութեամբ պարտավոր եք ընդունել երեք պատճառով։ Նախ, որովհետեւ սա անդրանիկ է եւ ամբողջին, եւ Քրիստոսով հաջողված նոր տպագրութեամբ՝ որպես ձեր հոգեւոր ծնողների ավետյաց եւ սքանչելիքներով լի զավակ, քանի որ մեր Լուսավորչից մինչեւ այսօր ձեզ համար, ձեր հոգեւոր ծնողը այսպիսի զավակ չէր ծնել։ Ինչպես որ Աբրահամը, թեպետ այլ կանանցից բազում զավակներ ուներ, սակայն, միայն Իսահակը սիրվեց ու մեծարվեց՝ տեւական ամլութիւնից հետո Աբրահամից եւ Սառայից ծնված լինելու պատճառով։ Երկրորդ՝ որովհետեւ լի է ամեն ինչում անհրաժեշտ եւ օգտակար դիտողութիւններով, մանավանդ այս ժամանակին պատշաճ, որովհետեւ պատերազմի ժա-

մանակ կապարն ավելի հարգի է, քան ոսկին։ Երրորդ՝ որովհետեւ փոքրածավալ է եւ հեշտակիր, մանավանդ՝ պարզ ու դյուրաոճ, որ ամենուր եւ ամեն ժամ կարելի է ձեռքին ունենալ ու ճաշակողների քաղցը հագեցնել բազմատեսակ համով, ինչպես մանանան՝ հին ժողովրդի համար։ Նաեւ սա կարող է իսպառ վերացնել ծույլերի եւ անհարկի տրտնջացողների պատճառաբանությունները, ովքեր սովորություն ունեն ասելու, թե երկար է, դժվար է եւ այլն։ Ուրեմն, սիրով եւ բաղձալի հոժարությամբ ընդունե՛ք սա, եւ գոնե օրը մեկ անգամ հոգեւոր զբոսանքի ելե՛ք սրա մեջ։ Եվ մեր Քրիստոս Աստված մեզ ամենքիս թող զգաստություն տա, լսի մեր աղոթքները եւ կատարի սիրով ըն-

կալողներիդ խնդրանքները, ու ինձ աշխատողիս եւս, ձեր աղոթքներից բաժին հանի։

Ո՛ղջ լերուք ի Տեր։

Թողթիս դատարկ տեղը լրացնելու համար նաեւ այս բանաստեղծությունը դրեցինք

Թող սա ձեզ գիտելի լինի, իմ հարազատ ազգ։

Որպեսզի չլինի թե ոմանց սրտում որեւէ կարծիք ծնվի,

Թե սա, որ ես առաջ բերեցի, սուրբ Հայրերի պակասը լրացրեցի,

Իբրեւ թե նրանք չեն գրել, աղոթքի այս գիրքը ես գրեցի։

Կամ էլ՝ թեպետ գրել են, սակայն այնքան հաջող չեն ու պիտանի։

Այսպես կարծողները մեղանչում են, ովքեր մեզ անտեղի բամբասում են։

Քանզի շատ են, բավական ու պատվական՝ գրքերն աղոթքի՝

Մեր երջանիկ Հայրերից ընծա-

յաբերված մեր Հայ ազգին։

Սակայն, նրանք Հաց են մեծերին, սա՝ իբրեւ կաթ, փոքրերին։

Այլեւ ոսկեղենի փայլն ավելանում է պղնձեղենի ցուցադրմամբ։

Եվ մանավանդ, որ մեծագին են, Հասարակ մարդկանց անՀասանելի են։

Երրորդություն եւ մի Աստված,
Հեշտալուր Տեր եւ Ողորմած,
Լսի՛ր հառաչանքները ծառայիդ,
Որ ողբալով Քեզ է դիմում:

Աղոթք՝ ուղղված Սուրբ Երրորդությանը, որպեսզի մեղքերի համար չբարկանա աղոթողի վրա, այլ ներելով՝ աղոթելիս համարձակություն տա

Սկսելուց առաջ երեք անգամ խաչակնքի՛ր դեմքդ

Օրհնյալ ես, Հա՛յր Սուրբ, Աստված ճշմարիտ:
Օրհնյալ ես, Որդի՛դ Սուրբ, Աստված ճշմարիտ:
Օրհնյալ ես, Հոգի՛դ Սուրբ, Աստված ճշմարիտ:
Օրհնյալ ես, Ամենասո՛ւրբ Երրորդություն եւ մի Աստվածու-

թյուն, Արարիչ եւ Նախախնամող բոլոր երեւելի եւ աներեւույթ արարածների, Քավիչ եւ Ներող բոլոր մեղավորների, Փրկիչ եւ Կեցուցիչ Քեզ դիմող բոլոր նեղվածների եւ վտանգվածների: Որին եւ ես՝ Քո ամենաթշվառ ծառան, Հավատում, խոստովանում եւ երկրպագում եմ: Ումից հույս ունեմ իմ մեղքերին թողություն ստանալ եւ հոգուս ու մարմնիս՝ փրկություն: Եվ արդ, Ամենասուրբ Երրորդությանդ եւ մի Աստվածությանդ առջեւ խոնարհված, մեծ հառաչանքով աղաչում եմ Քեզ, իմ անսխալ՛ Տեր, համարձակություն տո՛ւր ինձ Քեզ՝ կյանքի աղբյուրիդ մոտենալու եւ Քեզանից ողորմություն գտնելու: Բազում մեղքերիս համար ինձ վրա մի՛ բարկացիր եւ մի՛ հիշիր Քո հանդեպ կատարած իմ անթիվ չարիքները: Դատաստանի մեջ մի՛

մտիր ամենամեղավոր ծառայիս հետ, որ ինքս իմանալով ամեն ինչում իմ հանցավոր լինելը եւ գիտենալով Քո անհիշաչարությունը, ահա քեզ եմ դիմում, Ո՛վ իմ Աստված: Ուրեմն, ողորմությամբ նայի՛ր Քո ծառային եւ քաղցրությամբ ասա՛. ի՞նչ կկամենաս, որ անեմ քեզ համար: Արդարությամբ դատելով, սակայն, իմ անօրենությունները մեկ առ մեկ, եթե կամենաս քննել, ես ինչպե՞ս կարող եմ Քո առջեւ կանգնել, կամ էլ ինչպե՞ս կարող եմ արդարացնել ինձ, որովհետեւ, Ո՛վ ինձ Ստեղծող, գիտես իմ ամենասխալ բնությունը եւ անգամ վկայեցիր ամենաճշմարիտ բերանովդ, թե «Չար է մարդու արարքը, եւ ընդաբույս է չարությունը», եւ թե «Մարդու միտքը չարի խնամքին է տրված»: Ես գիտեմ նաեւ ու վկա եմ Քո ճշմարտությանը, Քո ծառա

Դավթի խոսքերի համաձայն՝ «Անօրէնութեամբ հղացա, եւ մեղքերի մէջ ծնեց ինձ իմ մայրը»։ Ուրեմն, ի սկզբանե անօրինութեամբ հղացվածը եւ մեղքի մէջ ծնվածն ինչպե՞ս կարող է Քո առջեւ արդարանալ եւ ինչպե՞ս կարող է ապրել, եթե Դու Քո ողորմութեամբ չօգնես, ինչպես եւ Դավիթն է ասում. «Եթե Տէրն ինձ չօգներ, ապա իմ անձը դժոխքում պիտի բնակվեր։ Եվ երբ սխալվում եւ ուզում էի սայթաքել, Նրա ողորմութիւնն էր ինձ օգնում»։ Ահա Քո այս ողորմութիւնն է, որ մեղավորներին Քեզ մոտենալու Հույս եւ Համարձակութիւն է տալիս։ Այս ողորմածութիւնն է, որ բացում է մեղքով Համրացածների լեզուները՝ Քեզ դիմելու եւ Քեզանից փրկութեան միջոց գտնելու։ Այս ողորմութիւնն է, որ Քո բարկութիւնը քաղցրութիւն է դարձնում։ Ուրեմն,

իմ արդար եւ ողորմած Տէ՛ր, եւ եւ՝ Քո անօրէն ծառան, Քո այս ողորմութեանն ապավինած՝ Քեզ եմ մոտենում եւ այս ողորմութեամբ, իբրեւ վահան, ամրափակում ինձ արդարութեանդ աՀից եւ իբրեւ փախստական, ընկնում ողորմած Աստծուդ աթոռի առաջ եւ խնդրում, որպեսզի Քո արդարութեամբ ինձ չմատնես, այլ ողորմութեամբդ Հանձն առնես պատսպարել ինձ, ոչ թե Քո արդարութեամբ ինձնից երեսդ դարձնես, այլ դրանք չտեսնելու Համար Քո ողորմութեամբ իմ մեղքերի՛ց երեսդ դարձնես եւ Հորդորական ու գթալիր խոսքերով ասես. ի՞նչ կկամենաս, որ անեմ՞ քեզ Համար։ Ես էլ, գլուխս խոնարՀելով, կասեմ, լսի՛ր իմ՝ Քո ծառայի աղաչանքները եւ քաղցրութեամբ կատարի՛ր խնդրանքներս, որոնք աՀա Քեզ եմ մատուցում, որպեսզի եւ եւ՝

ողորմելիս, ողորմած իմ Աստծուց ողորմութիւն ստանալով՝ փառաւորեմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ հաւիտյանս հաւիտենից: Ամեն:

Խոսքն է Հոգին կենդանացնում, Ինչպես Աստվածային սուրբ գիրն է ասում։

Սա ոչ թե զուտ այն խոսքն է, որով աշխարհն է լցված,

Այլ Աստծո խոսքն է, որ Հիրավի Հոգիներին է հաց։

Որովհետեւ երբ մարդն Աստծուն է դիմում եւ աղոթքով Նրան կանչում,

Այն ժամանակ Աստված կարծես նրա կանչին է պատասխանում՝

Տալով նրան՝ ինչ խնդրում է, նրա Հոգին ապրեցնում է։

Հատուկ աղոթք՝ աղոթողի համար

Եվ արդ, ես՝ Հետինս եւ ամենաանարգս, ամենաթշվառս, ամեն ինչում Հանցավորս, միշտ սխալվանս եւ ամոթալիս, որ նույնիսկ արժանի չեմ երկինք նայելու եւ զգալի արեգակի լույսը տեսնելու, կամենում եմ Համարձակվել եւ ներկայանալ Քո ամենատես աչքերին, Ո՛վ ինձ ստեղծող Աստված, Դու, որ ամենագետ ես եւ գաղտնատես եւ տեսնում ես մարդկանց անգործությունները: Գիտեմ նաեւ այս ու Հավատում եմ, որ Դո՛ւ երկայնամիտ, ողորմած եւ ներող Աստված ես եւ չես կամենում մեղավորի մահը, այլ՝ նրա դարձն ու փրկվելը: Ուստի փղձկյալ սրտով, կորագլուխ

անձամբ եւ արտասվաթոր աչքերով, գետնին ընկած բախում եմ Քո ամենառատ ողորմության դուռը՝ բռնելով Նրա բռնակներից, եւ վստահում Քո անսուտ հրամաններին, թե «Խնդրեցե՛ք, եւ կտրվի, հայցեցե՛ք, եւ կգտնեք, բախեցե՛ք, եւ կբացվի ձեր առջեւ»: Ահա՛, հառաչանքներով խնդրում եմ, կողկողալով բախում եւ հայցում Քեզանից, մարդասե՛ր Աստված, լսի՛ր Քո ծառայի աղաչանքները, որ կանխավ վերառաքում եմ Քեզ՝ իմ թշվառ անձի համար: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ եւ վա՛յ իմ անօրեն անձին, որովհետեւ չգիտեմ, թե ինչ երեսով պիտի համարձակվեմ կանգնել Քո առջեւ, Ո՛վ իմ Աստված, Ում միշտ մեղքերով բարկացրել եմ եւ արդեն իսկ այդ նույն բարկության ներքո եմ: Ի՞նչ պիտի ասեմ կամ ինչպե՛ս Քեզանից իմ մեղքերին թողություն

պիտի խնդրեմ, որ աՀա կրկին նույն մեղքի մեջ եմ ընկղմված, քանի որ Հավաստիորեն գիտեմ՝ արժանի եմ Քո սարսափելի այն խոսքին, թե «Երբ բարձրացնես քո ձեռքերը դեպի ինձ, Ես երեսս կդարձնեմ քեզանից եւ նույնիսկ եթե Հաճախ աղոթես, չպիտի լսեմ։ Ինձ Համար քո նվերները պիղծ են, Հագեցել եմ քեզանից, որովՀետեւ քո ձեռքերը լի են արյամբ»։ Հիրավի, ինձ նման անօրենների մասին ասացիր Եսայու միջոցով, եւ ես խոստովանում եմ, Տե՛ր, որ ոչ միայն արժանի եմ, որ ինձանից Քո երեսը թեքես ու ինձ չլսես, այլեւ, անգամ, եթե ինձ ողջողջ դժոխքն իջեցնես՝ արժանի եմ։ Քանզի ես ինքս գիտեմ, որ ամեն ինչում մեղավոր եմ եւ արժանի դատապարտության, որովՀետեւ ոչ միայն ձեռքերս են լի արյամբ, այսինքն՝ Հափշտակությամբ, զրկո-

ղությամբ եւ այլ բաներով, որ ձեռ-
քերին են վերաբերում, այլեւ ամբողջ
անձս է լի անօրինությամբ եւ բոլոր
մեղքերով, ուստի իմ մարմնին բժշ-
կություն չկա, իմ ոսկորներին՝ խա-
ղաղություն, եւ ոտքից մինչեւ գլուխ
առողջություն չկա, քանի որ «Իմ ա-
նօրինություններն իմ գլխից ավելի
վեր բարձրացան եւ որպես ծանր
բեռ՝ ծանրացան ինձ վրա», որոնք
ահա մոտեցել են ինձ՝ դժոխքի եւ
Հավիտենական Հրի մեջ ընկղմելու,
եթե Դու, Ո՛վ Տեր, ինձ չօգնես:
Գիտե՛մ, գիտե՛մ, Ո՛վ Աստված իմ,
որ Դու ամենասուրբ ես, ատում ես
մեղքը եւ գարշում մեղավորներից ու
այդ պատճառով նրանց աղոթքները
չես լսում, այլ ինչպես որ ասում ես,
դարձնում ես Քո երեսը: Նույնպես
երանելի Դավիթն էր ասում, թե «Իմ
սրտում մեղք էի տեսնում, մի՞թե,
Տե՛ր, ինձ լսեցիր»: Իսկ երբ մեղքն

ատեցի ու անարգեցի, Աստծո օրենքները սիրեցի, սրա համար Տերն ինձ լսեց եւ իմ խնդրանքներն ունկնդրեց: Սակայն, Ո՛վ անոխակալ, Ներող, գթած, երկայնամիտ եւ անհիշաչար Աստված, գիտեմ նաեւ եւ Քո Սուրբ Գրքերից լսել եմ, որ Քո բարկության ժամանակ նաեւ ողորմությունն ես հիշում եւ այս կյանքում հաճախ ես ողորմություն ի գործ դնում՝ ինչպես հայտնի է նինվեացիների, Իսրայելի եւ ուրիշ շատ-շատերի դեպքում: Եվ Քո այդ նույն Սուրբ Գրքերը Քեզ հիշելիս բազմիցս Ողորմած եւ Գթած անուններով են փառաբանում Քեզ, ինչպես Դավիթն է ասում. «Դու Տեր ողորմած ես եւ գթած, երկայնամիտ ու բազումողորմ Քեզ դիմող բոլորի հանդեպ»: Մի՞թե հայտնի չէ, Ո՛վ Աստված, քանի որ արդար ես, ուստի բարկանում ես մեղավորների

վրա եւ քանի որ ողորմած ես, իսկույն կորստյան չես մատնում, այլ համբերելով ներում ես եւ սպասում դարձին, ինչպես Դավիթն է վկայում. «Տերը մեզ վրա մինչեւ վերջ չի բարկանում եւ հավիտյան ոխ չի պահում»: Քո օրհնյալ բերանով Դու իսկ ասացիր, թե «Մի՞ թե մեղավորի մահն եմ կամենում. ո՛չ, այլ նրա դարձն ու ապրելն եմ կամենում», եւ թե «Մեղավորը որ պահին հոգվոց հանի՝ կապրի»: Ա՜հա՛ աներկբայելի հույս, ապաստանի վայր եւ բոլոր մեղավորների ապավինության հարկ: Օրհնյալ է Քո ողորմությունը, գովյալ է Քո գթությունը եւ բարեբանյալ է Քո մարդասիրությունը, Ո՛վ Աստված մեր, քանի որ բարկության ժամանակ ողորմություն ես գործածում, դատելիս՝ փրկության հնարներ ցույց տալիս, պատժելիս՝ ազատության ճանապարհ սովորեց-

նում։ Եթե այսպես է, ապա ի՞նչ իմաստ կա այժմ երկարապես ճառելու իմ մեղքերի քանակի մասին կամ էլ դրանք մեկ առ մեկ Քո առջեւ բացելու, որ մարդկանց անգործությունները տեսնում ես եւ Քո Գրքում բոլորին գրել ես։ Եվ մանավանդ ես՝ մեղավորս, ինքս ահա խոստովանեցի ամեն ինչում իմ մեղավոր լինելը, որի պատճառով Քո բարկության ներքո եմ եւ դատապարտության արժանի։ Այժմ, Ո՛վ ողորմած Աստված իմ, Քո ձեռքի գործ եւ Արարչիդ պատկեր եւ Քո արյամբ վերստին գնվածիս կթողնե՞ս իսպառ կորչելու։ Քավ լիցի, ողորմա՛ծ Աստված իմ, որովհետեւ բոլորին կյանք ես կամենում։

Ուրեմն, աղաչում եմ Քեզ, մարդասե՛ր Աստված, ողորմա՛ծ Աստված, երեսս դեմնին

խոնարհած, աղաչում եմ։ Արտասու-
քով թրջում եմ Քո ոտքերի պատ-
վանդանի հողը եւ հառաչանքներով
խնդրում, որպեսզի երբ մոտենամ
Քո ողորմության աղբյուրին, բար-
կությամբ չխրատես եւ սրտմտու-
թյամբ չհանդիմանես, ու ինձ ամե-
նապարտավոր ծառայիս հետ, որ ա-
մեն ինչում ափ ի բերան եւ անպա-
տասխան եմ Քո առջեւ, դատաս-
տանի չմտնես։ Այլ քաղցրությամբ
նայի՛ր ինձ եւ լսի՛ր իմ աղաչանքնե-
րը, որ անմաքուր բերանով Քեզ եմ
մատուցում։ Ինառակ որդու նման
մեղանչեցի երկնքի եւ Քո առաջ։
Սիրով ընդառաջ ելի՛ր, գթությամբ
գրկի՛ր եւ համբուրի՛ր Քո ողորմու-
թյամբ։ Թո՛ղ ինձ իմ բոլոր հան-
ցանքները, որոնք Դու ավելի լավ
գիտես, քան ես, եւ Քո օրհնյալ բե-
րանով ասա, թե՝ քո մեղքերը ներ-
ված թող լինեն։ Մարդասե՛ր

Աստված, Դու ասացիր, թե ասա քո անօրենութիւնները, որպեսզի արդարանաս։ Ահա ասացի եւ ասում եմ. միշտ մեղանչեցի եւ անօրինացա Քո առաջ, մեղանչեցի, Տէ՛ր, եւ Քո առաջ չարը գործեցի։ Ուրեմն, արդարացրո՛ւ ինձ, Ո՛վ Դու ճշմարտախոս Աստված։ Մարդասէ՛ր Աստված, Դու ասացիր, թե մեղավորը եթե դառնա դեպի Ինձ, Ես կգթամ նրան եւ նրա բոլոր մեղքերը ծովի մեջ կընկղմեմ։ Ուրեմն, Ո՛վ գթած Աստված, անլուծանելի պահի՛ր Քո հրաման-խոսքերը, գթա՛ մեղավոր ծառայիս, որ Քեզ եմ դիմում, եւ Քո անհուն ողորմության խորքերն ընկղմի՛ր իմ բոլոր մեղքերը։ Մարդասէ՛ր Աստված, Դու ասացիր. «Ես եմ, որ իբրեւ մեգ ջնջում եմ քո մեղքերը եւ քո անօրինութիւններն այլեւս չեմ հիշելու»։ Ուրեմն, հավաստի՛ր ինձ Քո խոսքը, Ո՛վ Դու անսուտ Աստ-

ված, ջնջի՛ր իմ բոլոր մեղքերն ու անհայտացրո՛ւ, կտրի՛ր եւ իսպառ չորացրո՛ւ իմ մեղքերի արմատը, որպեսզի իմ մէջ այլեւս չերեւան ու չբարկացնեն Քեզ։ Մարդասէ՛ր Աստված, Դու ասացիր՝ «Եթե ձեր մեղքերը ձանձախարիթ լինեն, ձյան պես սպիտակ կդարձնեմ»։ Իմ Հանդեպ կատարի՛ր Քո խոսքերը, Ո՛վ կարող Աստված։ Մեղքերով սեւացածիս սպիտակեցրո՛ւ եւ մաքրի՛ր բոլոր աղտեղութիւններից։ Ի՛մ Տեր եւ Աստված, Հիսուս Քրիստոս, Քո փրկագործութեան ժամանակ Դու ասացիր, թե «Չեկա կորստյան մատնելու, այլ ապրեցնելու», եւ թե «Չեկա արդարներին կանչելու, այլ՝ մեղավորներին»։ Արդարացրո՛ւ Քո խոսքերը, Տէ՛ր իմ։ Մեղքով մեռածիս կյանք պարգեւի՛ր եւ որին Քո պատվական արյամբ գնեցիր՝ մի՛ թող կորչի։ Մեղքի կապանքներից եւ

դժոխային գործերի բանտից ամենամեղավորիս սիրով դեպի Քեզ կանչի՛ր եւ կենդանացրո՛ւ, ինչպես Քո սիրելի Ղազարոսին, եւ Քո շնորհով ուրախացրո՛ւ իմ հոգին ու մարմինը, ինչպես Ղազարոսի քույրերին։ Տե՛ր իմ Հիսուս, Դու ասացիր, թե «Եկե՛ք դեպի Ինձ բոլոր հոգնածներդ եւ ծանրաբեռնվածներդ, եւ Ես կհանգստացնեմ ձեզ»։ Քո խոսքերն իմ հանդեպ իրականացրո՛ւ։ Ահա ես՝ պես-պես մեղքերով հոգնածս եւ անօրինությամբ ծանրաբեռնվածս, Քեզ եմ դիմում, վերցրո՛ւ իմ մեղքերի ծանրությունը եւ թեթեւացրո՛ւ ինձ տառապյալիս, Ո՛վ Դու հոգնածների հանգիստ եւ մեղավորների Քավիչ։

Ո՛վ իմ Տեր Հիսուս Քրիստոս, Գա՛ռդ Աստծո եւ աշխարհի մեղքերը վերացնող, Դու

ա՛յս բանի համար այնքան սարսռելի չարչարանքներ կրեցիր եւ հեղելով Քո պատվական եւ անգին արյունը՝ պատարագվեցիր խաչի վրա, որպեսզի մեզ փրկես մահից ու դժոխքից, հավիտենական մահից եւ կյանք պարգեւես։

Արդ, Քո նույն սոսկալի չարչարանքներն ու պատվական արյունը միջնորդ եմ դարձնում Քո առաջ եւ աղաչում. որովհետեւ ես Քո կողմից փրկվածներից ու կյանք պարգեւվածներից մեկն եմ, այնպես արա, որպեսզի մեղքի մեջ չմեռնեմ ու հավիտյան կորչեմ եւ Քո սուրբ արյան հեղումն ինձ համար իզուր լինի։ Ուրեմն, Քո պատվական արյան համար խնայի՛ր ինձ, Ո՛վ իմ Տեր, ների՛ր ինձ իմ բոլոր մեղքերը, որոնք մինչեւ այժմ հիմարաբար գործել եմ, եւ այսուհետ մաքուր

սիրտ եւ ուղիղ Հոգի Նորոգի՛ր իմ մեջ, որպեսզի այլեւս մեղք չգործեմ։ Տո՛ւր ինձ Քո սուրբ երկյուղը եւ դեպի այն ուղղիր իմ Հոգին, մարմինն ու միտքը, որպեսզի միշտ Քո սպառնալիքներից եւ դատաստանից երկյուղեմ, խորշեմ ու հեռանամ մեղքերից եւ բոլոր թյուր ճանապարհներից, միշտ զգույշ լինեմ Քո օրենքների եւ պատվիրանների հանդեպ, եւ հանապազ ի մտի ունենամ իմ մահվան սոսկալի օրը եւ Քո ահավոր դատաստանը։ Տե՛ր իմ, իմ Հոգին, միտքը, խղճմտանքն ու մարմնիս բոլոր զգայարանները մաքուր պահի՛ր Քեզ անհաճո ամեն բանից՝ չար մտածմունքներից, աղտեղի խորհուրդներից, արատավոր նայվածքներից, մեղսաւիթ լուրերից, դատարկ եւ անպատշաճ խոսակցություններից, զարտուղի ընթացքից եւ բոլոր մեղսածին շար-

ժումներից: Աղաչում եմ Քեզ, ի՛մ Տեր եւ Աստված Հիսուս Քրիստոս, փրկի՛ր ինձ եւ պահպանի՛ր բոլոր թշնամիներից եւ նրանց որոգայթներից, հոգեւոր եւ մարմնավոր բոլոր փորձութիւններից եւ, մանավանդ, ներկա վիշտերից ու փորձանքներից (եթե որեւէ վիշտ ունես, հատկապես դա հիշիր): Ինձ հետ եղի՛ր հանապազ օգնելու եւ փութա՛ ընկերանալու ինձ ամեն ժամ՝ առավոտյան եւ գիշերը, տանը եւ ճանապարհին, նստելիս, ննջելիս եւ արթնանալիս, աշխատելիս եւ հանգստանալիս, որպեսզի երբե՛ք չսասանվեմ: Քանի որ իմ մոր արգանդից Քո առջեւ ընկա, մանկութիւնիցս ի վեր Դո՛ւ ես իմ հույն ու ապավենը, Դո՛ւ ես իմ հույսը ծերության ժամանակ եւ Դու ես իմ հույն ու ապավենը իմ մահվան եւ Քո մյուս անգամ գալստյան ժամանակ: Դո՛ւ ես եւ ուրիշ

ոչ ոք։ Ի՛մ Տեր եւ Աստված Հիսուս Քրիստոս, ահա ես հոգով, մտքով, մարմնով եւ ամեն ինչով ինձ հանձնում եմ Քո անհուն ողորմությանն ու խնդրում, որպեսզի ինձ չզրկես Քո շնորհներից, չմերժես Քո խնամքից եւ չթողնես ինձ իմ կամքով գնալ, այլ Քո շնորհների մեջ պահես, Քո խնամքի տակ կառավարես եւ Քո կամքով ինձ առաջնորդես։ Ինչպես Քո օրհնյալ կամքին է հաճելի, այնպես առաջնորդես ինձ կատարյալ լինելու եւ շարժվելու, որքան որ այս կյանքում կլինեմ։ Իսկ իմ կյանքի օրերի ավարտին, Տե՛ր իմ, աղաչում եմ Քեզ անարատ ծնողիդ միջնորդությամբ, սուրբ Հովհաննես Կարապետի, սուրբ Ստեփաննոս Նախավկայի եւ Քո սուրբ առաքյալների ու մեր լուսավորիչներ՝ սուրբ Թադեոսի, Բարդուղիմեոսի, եւ Գրիգորի, բոլոր

երկնավոր եւ երկրավոր Քո սրբերի աղոթքներով ու բարեխոսութեամբ, Քո սուրբ նշանների՝ Քո կենսատու սուրբ Խաչի, կողամուխ Քո սուրբ Գեղարդի, սոսկալի սուրբ Բեւեռների եւ Փշեղէն Քո Պսակի եւ Քո չարչարանքների մյուս սուրբ գործիքների շնորհներով եւ միջնորդութեամբ տո՛ւր ինձ արթուն մտքով, կատարյալ դիտավորութեամբ, ճշմարիտ հավատքով, անկեղծ հույսով, առաքինի գործով, ստույգ խոստովանութեամբ, ջերմագին զղջմամբ, Քո սուրբ եւ կենարար մարմնի ու արյան հաղորդութեամբ գալ առ Քեզ եւ արժանանալ Քո ամենացանկալի տեսութեանն ու Քո երջանիկ սրբերի եւ սիրելիների հետ փառավորել Քեզ Հոր եւ Սուրբ Հոգուդ հետ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Տէ՛ր իմ Աստված, աղերսական խոսքերիս ավարտին Հայցում եմ նաեւ, որպեսզի սա Քո շնորհների տուփ լինի՝ դեղ տալու նաեւ ուրիշների վերքերին: Որպեսզի ովքեր սրտի զղջմամբ սրանով Քեզ՝ բարիքների աղբյուրիդ մոտենան, լսես նրանց աղաչանքները՝ տալով նրանց պիտանին, որպեսզի բոլորի բերանները Քեզ հանապազ փառավորեն:

Առավոտյան ժամի աղոթք

Տէ՛ր, եթե իմ շուրթերը բացես, իմ բերանը Քո օրհնությունը պիտի երգի:

Օրհնյալ համագո եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդությունդ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Գլուխ Գ

Տէ՛ր իմ եւ Աստվա՛ծ իմ, գոհանում եմ Քեզանից, օրհնում ու փառավորում Քո սուրբ անունը, որ ինձ Քո մեղավոր եւ անարժան ծառային, այս գիշեր բոլոր վտանգներից ու փորձութիւններից պահեցիր եւ խաղաղութիւամբ հասցրեցիր առավոտվա այս ժամին ու Քո ողորմութիան լույսը տեսնելու արժանացրեցիր: Այժմ աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ եւ Աստվա՛ծ իմ, նույն ամենազոր Քո Աջով ինձ պահի՛ր նաեւ այս ցերեկ եւ փրկի՛ր վնասաբեր բոլոր պատահարներից, երեւելի եւ աներեւույթ թշնամիներից եւ բոլոր մեղսաւիթ խորհուրդներից՝ խոսքերից եւ գործերից: Իմ ընթացքն ուղիղ դարձրո՛ւ, որպեսզի

մեղքերն ինձ չտիրեն։ Ինձ առաջ-
նորդի՛ր բարի խորհուրդների, ճշ-
մարիտ խոսքերի, անմեղաձին եւ
օգտակար գործերի։ Ինձ՝ սխալա-
կան Քո ծառային, բոլոր գործերում
Դո՛ւ եղիր առաջնորդ եւ վերակա-
ցու ու ամեն ժամանակ փրկի՛ր դեւի
գայթակղություններից։ Իմ ձեռքի
գործերը կատարյալ դարձրո՛ւ եւ
ինձ հաջողություն պարգեւի՛ր։ Իմ
հոգու եւ մարմնի պետքերը Դո՛ւ
պատրաստիր եւ առանց մեղքերի եւ
փորձանքների՝ խաղաղությամբ
հասցրո՛ւ երեկոյան ժամին, որպես-
զի այն ժամին եւս փառավորեմ
Սուրբ Երրորդությանդ, որին միշտ
վայել է փառք հավիտյանս հավիտե-
նից. Ամեն։

Երեկոյան՝ քնելու ժամի աղոթք

Գլուխ Դ

Տէ՛ր իմ եւ Աստո՛ւծ իմ, գոհանում եմ Քեզանից, օրհնում եւ փառաւորում Քո Սուրբ Անունը, որ անարժան եւ մեղաւոր Քո ծառային այսօր ցերեկը պահեցիր եւ խաղաղութեամբ երեկոյան այս ժամին հասցրեցիր։ Այժմ աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ եւ Աստո՛ւծ իմ, որ ցերեկն ստեղծեցիր աշխատելու, իսկ գիշերը՝ մեր տկար բնութեան հանգստանալու համար, արդ, Քո ծառան թող մարմնով ննջի, իսկ հոգով եւ մտքով արթուն մնա։ Տէ՛ր իմ եւ Աստո՛ւծ, ահա ես ննջում եմ եւ անկենդան ընկած մի դի եմ ու չգի-

տեմ, թե ե՛րբ եւ ինչպե՛ս պետք է արթնանամ։ Դրա համար էլ հոգիս, մարմինս եւ իմ բոլոր պարագաները Քո անհուն ողորմությանն եմ հանձնում եւ խնդրում, որ Դու Քո ամենազոր Աջով դրոշմես Քո ծառայի տեղն ու հարկը, ելքն ու մուտքը, որ կարողանամ ապահով, աներկյուղ, խաղաղությամբ եւ առանց փորձանքների ննջել։ Պահպանի՛ր ինձ հոգեւոր եւ մարմնավոր բոլոր թշնամիներից եւ փրկի՛ր նրանց որոգայթներից, խավարում շրջող իրերից, գիշերային երկյուղից, դիվական ցնորքներից եւ զարհուրեցնող տեսիլքներից։ Մաքրի՛ր իմ միտքը բոլոր թյուր մտածումներից, աղտեղի խորհուրդներից եւ բոլոր մեղսածին շարժումներից։ Քո հանցավոր ծառայի վրա պահապան եւ վերակացու կարգի՛ր Քո երկնային զինվորների բանակներին եւ իմ պահա-

պան հրեշտակիդ հետ, Քրիստոսիդ ամենահաղթ Խաչի նշանը, որոնցով այս գիշեր ապահով եւ աներկյուղ ննջեմ եւ խաղաղությամբ առավոտյան ժամին հանեմ, որպեսզի այդ ժամին էլ փառավորեմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, որին միշտ վայել է փառք եւ երկրպագություն հավիտյանս հավիտենից. Ամեն:

Աղոթք ընդհանուր ննջեցյալների եւ մանավանդ ընտանիքների եւ երախտավորների համար

Գլուխ Ե

Ո՛վ բազմագութ Աստված, աղաչում եւ խնդրում եմ Քեզ նաեւ մեր ազգի բոլոր հին եւ նոր, հավատով եւ հույսով ի Քեզ ննջածների համար: Մանավանդ, Քեզ մոտ ննջող իմ մարմնավոր եւ հոգեւոր ծնողների, եղբայրների, քույրերի, ազգականների, սիրելիների, բարեկամների, բարու մեջ կրթող հոգեւոր վարդապետների, ուսուցիչների, մեր բոլոր աշխատավորների եւ երախտավորների համար, որ-

պեսզի Քո գալստյան մեծ օրը ո-
ղորմությամբ հիշես եւ թողություն
շնորհես նրանց բոլոր մեղքերին ու
սխալներին եւ Քո աջակողմյան
դասի սրբերի հետ դասես եւ թույլ
տաս լսել Քո երանավետ խոսքը,
թե՝ «Եկե՛ք, իմ Հոր օրհնածներ»:
Եվ, ըստ մեր հանդեպ կատարած
նրանց երախտիքների՝ մեկի
փոխարեն բյուրապատիկ հատուցես
նրանց հոգիներին, իսկ մեզ նրանց
պարտքերից անպարտ դարձնես:
Քեզ փառք հավիտյանս հավիտե-
նից. Ամեն:

Աղոթք թշնամիների եւ չարակամների համար

Գլուխ Զ

Այդ, Ո՛վ ողորմած եւ բազմագութ Աստված իմ Հիսուս Քրիստոս, ինչպես հարկն է եւ մեր բնության օրենքն է պահանջում, իմ ընտանիքի անդամների եւ բարերարների համար Քեզանից բարություն եւ ողորմություն խնդրեցի: Այժմ աղաչում եմ Քեզ նաեւ իմ թշնամիների համար, ինչպես Դու իսկ ասացիր Քո օրհնյալ բերանով, թե «Բարի գործեք ձեզ ատողներին»: Ուրեմն, Քո առաջ խոնարհված խնդրում եմ Քո ամենառատ ողորմությունը, որպեսզի

ողորմես նաեւ իմ բոլոր թշնամիներին, ատողներին, չարակամներին, վնասատուներին եւ բոլոր նրանց, ովքեր իմ՝ Քո ծառայի մասին չարիքներ են խորհում եւ խոսում, գործում եւ կամենում գործել: Իմ պատճառով մի՛ բարկացիր նրանց վրա, ովքեր թե՛ իրավամբ եւ թե՛ անիրավ կերպով բամբասում, վատաբանում եւ հայհոյում են ինձ, այլ նե-ր՛ր եւ թո՛ղ նրանց մեղքերը, որովհետեւ նրանք մեղանչում են ի՛մ հանդեպ, որ հիրավի մեղավոր եմ եւ արժանի ամեն տեսակ բամբասանքների եւ նախատինքների, իսկ ես՝ Քո՛ հանդեպ եմ մեղանչում, որ արդար ես ամեն ինչում եւ միշտ բարերար իմ հանդեպ: Ուրեմն, եթե նրանք արժանի են Քո բարկությանը, ապա բյուրապատիկ ես եմ բարկության որդի եւ պատիժների արժանի ավելի, քան նրանք: Սրա հա-

մար աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ, որ բոլոր բարութիւնների աղբիւր ես եւ անհուն ողորմութեան ծով, որպէսզի ողորմես նրանց եւ նրանց հետ՝ նաեւ ինձ, եւ ներես իմ բոլոր սխալները, որ ունեմ, եւ չարից դարձնես՝ փոխելով դէպի բարին, որպէսզի բոլորս զգաստանալով՝ Քո կամքի համաձայն գնանք եւ փառավորենք Քեզ՝ Հոր եւ Սուրբ Հոգուդ հետ: Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Ողբերգական աղոթք ողջ ազգիս եւ Հայոց եկեղեցիների համար

Գլուխ Է

Եվ արդ, Տէ՛ր իմ եւ Աստվա՛ծ իմ Հիսուս Քրիստոս, եւ՝ ամենասխալ, բազում չարիքներով եւ անօրինութեամբ լցված Քո ծառան, արդէն կորագլուխ անձամբ խոնարհված եւ մեծակական ողբով ի խորոց սրտի հառաչում եմ առ ամենագթածդ Աստված եւ աղաչում։ Մեր ողորմելի եւ անտերացած ազգի համար Քեզ եմ կանչում, Ո՛վ ողորմելիների ողորմած եւ անտերների Տեր, անճարների ճար, անօգնականների օգնական, անհույսների

հույս եւ ապավէն, նեղեալների եւ վշտացածների հանգիստ եւ միխիթարութիւն։ Մեծ թախանձանքով առ Քեզ եմ գոչում, բացի՛ր, Տէ՛ր, Քո աչքերը եւ տե՛ս մեր ողորմելիութիւնը, տե՛ս, թե Քո փոքրիկ հոտն ինչպես է ցրվել եւ տարագրվել ամբողջ աշխարհով, մատնվել օտար տերերի եւ թշնամիների ձեռքը, զրկվել իր բնակութեան բնիկ տեղերից եւ հայրենիքից։ Ա՛խ, նրանք նման են ծովի ալիքների վրա առանց ղեկավարի ղեկաբեկ տատանվող նավի եւ անապատում առանց հովվի մոլորված ոչխարների, ո՛չ Մովսես ունեն, որ առաջնորդի, եւ ո՛չ էլ Հեսու, որ թշնամիների դեմ ելնի։ Ո՛չ Դավիթ ունեն, որ նրանց համար հաճելի պատարագ մատուցի Քեզ եւ Քո բարկութեան սուրը ետ դարձնի։ Մարգարե, թագավոր, իշխան եւ առաջնորդ եւ ո՛չ էլ որեւէ

տեղից օգնություն ունեն: Մեր իշ-
խաններն ու ազատազունները,
ունեցվածքից եւ իշխանությունից
զրկված եւ ուրիշների իշխանության
տակ ընկած, ծառայում են
ողորմելիաբար: Մեր հասարակ ժո-
ղովուրդը, այլազգիների ծանր լծի եւ
հարկի տակ, իր կյանքի ապրուստը
հազիվ է հայթայթում եւ գտնում,
երբ ուրիշներն են ուտում եւ վայե-
լում Նրանց սերմանածն ու վաստա-
կածը: Քո անվամբ եւ Քո սիրելի
սրբերի հիշատակին կառուցված,
Սուրբ Հոգուդ օծմամբ կնքված եւ
ամենահաղթ Խաչիդ նշանով
պսակված վայելչագեղ եկեղեցիներն
ու պայծառաշեն վանքերը, որոնց
մեջ Աստծո Գառն էր աշխարհի փր-
կության համար պատարագվում, ո-
րոնց մեջ Քո սրբագործ եւ հոգեկե-
ցույց խորհուրդներն էին կատար-
վում, որոնցից օրհնությունների եւ

փառաբանությունների ձայներ, հոգեւոր բուրմունք, հաճելի ընծաներ եւ հաշտարար աղոթքներ էին վերառաքվում, ահա՛, մեծ մասամբ ամայացել են եւ ապականվել, գողերի եւ գազանների օթեւան դարձել: Հիրավի, թշնամին Քո փափագածի հանդեպ ոտնձգություն արեց: Հեթանոսները մտան Քո ժառանգությունը եւ պղծեցին Քո սուրբ տաճարը: Նրանց սրահներն ու սրբությունները ապականություն դարձան, նրանց ճանապարհները սգավոր դարձան, նրանց տարեկան տոների երթեւեկը դադարեց: Լռեցին նրանցից ելնող օրհնությունների եւ փառաբանությունների ձայները: Այնտեղ գազաններն ու հափշտակողներն են ելումուտ անում: Աքանչելի դամբարաններն ու նրանց մեջ գտնվող Քո սրբերի բժշկարար

Նշխարները անսուրբերի եւ պիղծերի ոտքերի կոխան են դարձել։ Դրանց քահանաներն ու պաշտոնյաները հալածվել եւ ամենուր փախստական են դարձել, շատերն էլ գերվել, սպանվել եւ անհայտ կորել։ Ուստի մենք՝ մնացածներս, մեր դրացիների համար նախատինք եղանք եւ թշնամիների կատակներում ծաղրի ենթարկվեցինք։ Արդ, այս բոլորը մեզ վրա եկել եւ գալիս են մե՛ր մեղքերի պատճառով։ Քանի որ մեղանչեցինք, անօրինացանք, եւ ապստամբեցինք Քո դեմ, այդ պատճառով էլ Դու թույլ տվեցիր, որ բոլոր այս չարիքները գան մեզ վրա, տիրեն մեզ եւ մատնեն թշնամիների, ապստամբ տերերի ձեռքը, այնպես որ, մեր մեղքերի համար ամբողջ երկրում տառապում ենք այսօր։ Ուրեմն, Քեզ, մեր Աստծուն՝ արդարություն, իսկ մեր երեսներին՝

ամոթ։ Արդ, այժմ ո՞ւմ պիտի դիմենք, Ո՛վ Աստված մեր, եւ ո՞ւմ պիտի պատմենք մեր ցավերը, եթե ոչ Նույն Բարկացողիդ, որ ինչպես արդարությամբ խրատեցիր եւ պատժեցիր մեզ, Նույնպես կարող ես նույն ողորմությամբդ վերստին բժշկել եւ մխիթարել։ Դրա համար ահա, ընկնում եմ անոխակալ Աստծուդ առաջ, եւ անառակի պես գոչում. մեղանչել ենք երկնքի եւ Քո առաջ, մեղանչել ենք Ստեղծողիդ առաջ, մեղանչել ենք Քո, մեր Բարերարիդ եւ Աստծուդ առաջ։ Աղաչում եմ Քեզ, անոխակալ Աստված, հրաժարվի՛ր Քո բարկությունից եւ Քո ցասումից, մի՛ հիշիր մեր առաջին մեղքերը, Քո ողորմությունը շուտափույթ թող գա մեզ վրա, որովհետեւ շատ ենք աղքատացել։ Զարթնի՛ր, Տե՛ր, զարթնի՛ր, արի՛ եւ մի՛ մերժիր մեզ իսպառ։ Մի՛ մո-

ռացիր մեր աղքատությունը եւ նեղությունները։ Արի՛, Տէ՛ր, օգնի՛ր եւ փրկի՛ր մեզ Քո անվան համար, որ դրված է մեզ վրա։ Հանուն Քո անվան՝ իսպառ մի՛ մատնիր մեզ, մի՛ դրժիր Քո ուխտը եւ մի՛ հեռացրու Քո ողորմությունը մեզանից, որովհետեւ Դու ես միայն մեր Տեր եւ Թագավոր, Դու ես միայն մեր Փրկիչն ու օգնականը, Դու ես միայն մեր ապավենն ու հույսը, որովհետեւ Քեզանից բացի որեւէ մեկին չենք ճանաչում եւ հանապազ Քո անունն ենք տալիս։ Տէ՛ս մեր ազգի տառապանքները, օգնության հասի՛ր եւ այցելի՛ր։ Եվ ինչպես Աբրահամի, Իսահակի, Հակոբի եւ Քո Դավիթ ծառաների համար գթում էիր հին ժողովրդին, այժմ էլ Քո անարատ ծնող Սուրբ Աստվածածնի, Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Քո Մկրտչի, Սուրբ Ստե-

փաննոս Քո Նախավկայի, Քո սուրբ առաքյալների եւ մարգարեների եւ մեր Թադեոս ու Բարդուղիմեոս սուրբ առաքյալների եւ հատուկ մեր լուսավորիչների, Սուրբ Գրիգոր բազմաչարչար Քո վկայի եւ Քո ընտրյալ նրա որդիների, թոռների ու ծոռների, սուրբ Հռիփսիմյանց եւ Գայանյանց Քո հաղթող վկաների, այլեւ սուրբ Հայրապետների եւ վարդապետների, ճգնավորների, մարտիրոսների, կույսերի եւ Քո բոլոր հին ու նոր, հայտնի եւ անհայտ սրբերի բարեխոսությամբ, այլեւ Քո երկնավորների՝ Գաբրիելի եւ Միքայելի եւ ամբողջ անմարմին դասերի բարեխոսությամբ գթա՛ Քո նոր ժողովրդին եւ փոքր հոտին։ Որովհետեւ եթե մեր բազում մեղքերի եւ անօրինությունների պատճառով առժամանակ թողեցիր մեզ, երեսդ դարձրեցիր մեզանից եւ Քո

պատվական արյան համար տրտմեցիր, ապա նաեւ քո սիրելի-ների արդարության համար դար-ձի՛ր եւ քո մեծ ողորմությամբ ո-ղորմի՛ր մեզ, ցո՛ւց տուր քո երեսը եւ ուրախացրո՛ւ մեզ։ Ինչպես սաա-ցիր Եսայի մարգարեի միջոցով։ Լսելի՛ արա մեզ այն երանավետ ձայնը, լուսավորի՛ր Հայաստանյայց Եկեղեցիդ եւ ուրախ եղի՛ր, որով-հետեւ հասել է քո լույսը։ Ահավա-սիկ խաղաղությունը իբրեւ գետ դարձնում եմ դեպի քեզ եւ քո մա-նուկներին իրենց ուսերի վրա բարձ-րացրած հեռուներից կբերեն։ Հի-րավի, այսպիսի Ամենակարող Աստծո ողորմությանն ենք մնացել ապավինած, ողորմա՛ծ Աստված։ Ուրեմն, հաշտվի՛ր քո մնացած ժո-ղովրդի հետ։ Փրկի՛ր մեզ մեծ հրաշքներով, ժողովի՛ր մեզ քո սիրո գոգը եւ մխիթարի՛ր մեզ քո սուրբ

անվան փառքի համար, որ դրել ես մեզ վրա։

Այլեւ աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ եւ Աստվա՛ծ իմ, մեր ամայացած եւ անշքացած վանքերի ու եկեղեցիների համար։ Լսի՛ր մեզ, որ ահա նեղված սրտով դիմում ենք Քեզ։ Մի՛ հիշիր մեր մեղքերը, որով բարկացրեցինք Քեզ, այլ հիշի՛ր Քո սրբերին, որոնց անուններով կառուցվեցին մեր եկեղեցիները, հիշի՛ր նրանց սուրբ եւ մաքուր նշխարները, որոնք ամփոփված են նրանց մեջ, եւ սրբությունները, որոնց վրա Քո անունն է գրված։ Ոչ թե իմ արդարության համար եմ այս աղերսներն ուղղում Քեզ, այլ Քո բազում գթության եւ Քո սիրելի սրբերի ու սրբությունների սիրո համար։ Աղաչում եմ Քեզ, ողորմած Աստված, գթած Աստված, Քո անհուն ողորմության

համար, ի սեր Քո սուրբ եկեղեցիներ-
ի եւ սրբությունների, Քեզ հաճելի
սրբերի բարեխոսությամբ եւ նրանց
չարչարանքների, պատվական ա-
ության, մաքուր նշխարների եւ դամ-
բարանների միջնորդությամբ ողոր-
մի՛ր եւ այցելի՛ր մեզ: Ինչպես տա-
ռապեցրեցիր Քո բարկությամբ,
նույնպես բժշկի՛ր եւ մխիթարի՛ր
Քո ողորմությամբ: Որովհետեւ ինչ-
պես մեր մեղքերի պատճառով մեր
աչքերը ամայություն եւ ապակա-
նություն տեսան, այնպես էլ, Հանուն
Քո սիրելի սրբերի, վերստին տես-
նելու արժանացրու նրանց վերանո-
րոգությունն ու պայծառությունը:
Եվ ինչպես որ նրանցից դադարե-
ցին եւ լռեցին օրհնության եւ փա-
ռաբանության ձայները, այնպես ա-
րա, որ Քո անվան փառքի համար
վերստին զորանան եւ բարձրանան,
որպեսզի բոլորն իմանան, որ Քո ա-

Նունը դրված է մեր եւ նրանց վրա, որը եւ մենք տեսնելով՝ փառք եւ գոհութիւն առաքենք դէպի երկինք՝ Հոր եւ Սուրբ Հոգուդ հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Հայ ազգի համար կատարվող հատուկ բարերարութիւնների համար շնորհակալութիւններ Աստծուն: Եվ դարձյալ խնդրանքներ, որպեսզի առավել եւս ողորմի եւ բարերարութիւն անի

Գլուխ Ը

Ողորմած Աստծուդ վերակրկնելով իմ պաղատանքները՝ խնդրում եմ եւ մեր ազգի մնացորդի, այսինքն՝ վանքերի, եկեղեցիների, եկեղեցականների եւ ամբողջ մեր ժողովրդի համար, որոնց ցայսօր հաստատուն եւ բարեկարգ

ես պահել։ Մեծ թախանձանքով աղաչում եմ, որ հետ այսու եւս, Քո սուրբ անվան փառքի համար, ինամքիդ տակ պահես։ Մի՛ նայիր իմ մեղքերին ու անարժանութիւններին, այլ նայի՛ր Քո անսպառ սիրուդ եւ անբավ մարդասիրութեանդ, եւ ըստ իմ սխալական բնութեան եւ տկար մտքի, ինչ որ խնդրում եմ, Դու կատարի՛ր իմ խնդրանքը Քո ամենագետ եւ անսխալ իմաստութեամբ, Դո՛ւ որ ավելի լավ գիտես մեր պետքերն ու օգուտները, քան մենք, որ խնդրում ենք եւ գիտենք։ Արդ, նախքան իմ խնդրելը՝ իբրեւ աղերս, Քո՝ իմ Աստծուդ առաջ դնելով գլխավոր եւ մեծամեծ բարերարութիւններդ, որոնք արել ես հատկապես Հայոց ազգիս, հիշում եմ մեծ շնորհակալութեամբ, որովհետեւ եթե ոչ մեր արժանավորության համար, գոնե նրանց խնայելով գթաս

մեզ եւ ողորմես։ Արդ, նախ հիշեցնեմ Քեզ, Ո՛վ Տեր իմ Հիսուս Քրիստոս, քոյակերտ եւ քոյահաստատ Աթոռդ, որովհետեւ հավատքի եւ հոգու մեր ծնող Սուրբ Էջմիածինը, որը Քո իջմամբ հիմնարկեցիր, Քո աստվածային լույսով ձեւակերպեցիր, եւ ամենիմաստ ճարտարապետ, Դո՛ւ կառուցեցիր եւ հաստատեցիր։ Սուրբ Էջմիածինն եմ ասում, որը որպես միակ պայծառագույն արեգակ՝ ծագեցրեցիր Արարատյան դաշտի վրա, եւ որպես միակ լուսատու եւ պատվական ակն՝ փայլեցրեցիր Վաղարշապատ քաղաքի վրա։ Որն իբրեւ Քո անսպառելի շնորհների միակ շտեմարան՝ կառուցեցիր Հայկազյան ազգի մեջ եւ իբրեւ հոգեպարար պարգեւների միակ մշտաբուխ աղբյուր՝ բխեցրեցիր Թորգոմյան վիճակի համար, որով ցանկալի եւ նախանձելի

դարձրեցիր նրան բոլոր ազգերի եւ երկրների աչքում: Նաեւ այս միակ, գերազանցագույն եւ անհամեմատ պարգեւը, առանձնահատուկ սիրով մեզ՝ հայ ազգիս եւ Քո փոքր հոտիդ շնորհեցիր: Եվ ոչ միայն այս, այլեւ բազում եղանակներով, հատուկ սիրով ուրիշ ազգերի մեջ առանձնացրեցիր մեր ազգը, որովհետեւ թեպետ յուրաքանչյուր ազգ եւ ժողովուրդ Աթոռներ եւ եկեղեցիներ ունեն, սակայն նրանք լուսաձեւ եւ աստվածակերտ չեն Սուրբ Էջմիածնի մեր Աթոռի պես: Ուրիշ հավատացյալ ազգերի հովվապետերն ու լուսավորիչները թեպետ սուրբ են, սակայն տանհինգ տարի բազմատեսակ չարչարանքների փորձության բովով չեն մաքրվել, պարզվել եւ մահից ազատվել, ինչպես մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Թեպետ ուրիշ ազգեր անմարմին եւ

աստվածային Բանի մարմնացու-
ցիչ՝ գիր եւ տառ ունեն, սակայն մեր
գրերի նման Հատուկ Քեզանից չեն
շնորհված եւ Քո մատով չեն գծված։
Թեպետ բազում ազգերի կանչեցիր
դեպի Քեզ եւ Հավատացյալներ
դարձրեցիր, սակայն Քո սրբազան
առաքյալների եւ աշակերտների
քարոզությամբ եւ
վարդապետությամբ այդ արեցիր,
իսկ Հայոց ազգին (որովհետեւ Հատուկ
Քեզ սիրելի էր) չբավարարվեցիր աշա-
կերտներով եւ քարոզությամբ Քոնը
դարձնել, այլ, կարծես թե անաշ-
խատ եւ ամենակարող Աստվածդ,
աշխատեցիր եւ այնքան Հոգացիր,
մինչեւ որ բռնությամբ եւ
անօրինակ Հրաշքներով դեպի Քեզ
կանչեցիր եւ Քեզ սեփական ժողո-
վուրդ դարձրեցիր։ Ուրիշ ազգերի
վրա թեեւ թագավորներ եւ մարմ-
նավոր իշխողներ կարգեցիր, սա-

կայն մեզ՝ Հայոց ազգի եւ Քո փոքր Հոտի Համար Դու Ի՛նքդ եղար Թագավոր, Տեր եւ Իշխան՝ ավանդելով մեզ, թե՝ «Իմ եւ իմիններ թագավորությունն այս աշխարհից չէ», եւ ըստ Քո Հարազատ սուրբ Պողոսի՝ «Ովքեր քրիստոնյա են, իրենց մարմինները խա՛չ պիտի Հանեն»։ Եթե այլազգիների ձեռքով երբեմն տանջում եւ խրատում ես մեզ, այն եւս Քո Հայրական եւ Հատուկ սիրո նշաններն են, որովհետեւ ում սիրում ես, խրատում եւ Հանդիմանում ես, որոնք Քո Հատուկ եւ գերազանցագույն սիրո եւ գթության նշաններն ու քարոզներն են, որ ունես մեր խեղճ Հայոց ազգի Հանդեպ։ Հիրավի, Ո՛վ Տեր իմ, ինչպես մեր Հանդեպ վարվեցիր, ուրիշ ազգերի եւ ժողովուրդների Հետ նույնկերպ չվարվեցիր։ Արդ, Քո այսքան բարերարությունների փոխարեն ոչինչ

չունենք Քեզ հատուցելու, այլ միայն շնորհակալությամբ հանդերձ հավիտյանս հավիտենից փառք եւ գոհություն պիտի մատուցենք Քեզ՝ անկարոտ Աստծուդ։

Արդ, որ ավելի մեծ եւ ավելի գերազանց գործեր արեցիր, փոքրերն ու ավելի դյուրինները մի՛ խնայիր մեզանից, Ո՛վ բարերար եւ ողորմած Աստված, ում Համար ամեն ինչ հնարավոր է եւ դյուրին։ Ուրեմն, աղաչում եմ Քեզ, Ո՛վ բարերար եւ ողորմած Աստված, քոյահաստատ մեր Աթոռը եւ Մայրը՝ Սուրբ Էջմիածինը (որը իբրեւ հատուկ փառք, պարծանք եւ մխիթարություն մեզ՝ հայ ազգիս եւ լուսավորչակրոն հոտիս շնորհեցիր), ըստ Քո անսուտ խոստման, անխախտելի վեմիդ վրա հաստատուն եւ անշա՛րժ պահիր։ Ի մխիթարություն, ի զվարճություն մեզ եւ մեր ե-

կեղեցիների մինչեւ աշխարհի վերջը Քո Սուրբ Հոգու մշտազեղ եւ հոգեպարար շնորհներն անպակա՛ս արա նրանից: Նրան, որ հաստատել ես մեր մեջ, Քո սուրբ անվան փառքի համար օրըստօրե զորացրո՛ւ, պայծառացրո՛ւ եւ փայլեցրո՛ւ երկրի բոլոր ծագերում: Քո ճշմարիտ խոստումի համաձայն՝ Քո ոտքերի սուրբ Տեղը բոլորի աչքերում միշտ փառավորի՛ր: Փշրի՛ր Քո ամենակարող զորությամբ եւ խորտակի՛ր նրանց, ովքեր կհարվածեն այն վեմին: Կուրացրո՛ւ նրանց աչքերը, ովքեր նենգությամբ նայում են նրան: Զարդարուն եւ պե՛րճ պահիր նրան միշտ քոյաընտիր Հայրապետներով, շնորհափայլ եպիսկոպոսներով եւ վարդապետներով եւ բոլոր հավատացյալներով: Ներկա մեր Հայրապետին (այս անուն)՝ Կաթողիկոսին, Քեզ հաճելի նրա բոլոր

գործերում եւ ընթացքներում ամեն ժամ օգնական եւ ձեռնհաս եղի՛ր։ Քո սուրբ տան պայծառության եւ Քո ծառաների միխիթարության համար նրան երկար տարիներ խաղաղությամբ պահի՛ր։

Եվ մեր Սուրբ Աթոռի հետ պահի՛ր նաեւ մեր մյուս բոլոր վանքերն ու եկեղեցիները՝ առաջնորդներով, վարդապետներով, քահանաներով եւ իշխաններով, ժողովրդով եւ նրանց բոլոր հավատացյալներով հանդերձ, շինության, բարեկարգության եւ խաղաղության համար՝ զերծ եւ անաղարտ բոլոր օտար եւ թյուր աղանդներից։ Քո ամենահաղթ զորությունն սուրբ Խաչի անպարտելի նշանը, երկնային զինվորությունների բանակները եւ Քո բոլոր սրբերի դասերը մեր եկեղեցիների եւ նրա հավատացյալ-

ների վրա ողջ գիշեր եւ ողջ ցերեկ պահապան կարգի՛ր եւ փրկի՛ր բոլոր հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից եւ փորձութիւններից, որպեսզի նրանց մէջ Քո անունը հաւիտյան փառաւորվի:

Տէ՛ր Աստված մեր, մեր հոգեւոր հովիվներին եւ առաջնորդներին քոյաշունչ իմաստութիւնը եւ քոյապատվեր հեզութիւնն ու խոնարհութիւնը տո՛ւր, որպեսզի կամքիդ համաձայն Քո հոտը հովվելով, Հովվապետիդ երեւալու ժամանակ համարձակութիւնամբ կարողանան ասել՝ ահա ես եւ իմ հավատացյալները, եւ Քեզանից փառքի պսակը ընդունել: Նրանց զորութիւնամբ եւ արիութիւնամբ սպառազինի՛ր, որպեսզի կարողանան դիմակայել ոչխարամորթ գայլերին եւ մեր եկեղեցիների ու

Հավատքի ապականիչներին: Մեր քահանաներին զգաստություն եւ մաքրություն տո՛ւր, որպեսզի կարողանան արժանապես ծառայել Քո սուրբ խորհրդին եւ լինել համարձակ միջնորդ Աստծուդ եւ ժողովրդի՝ նրանց աղոթքը մատուցելու Քեզ եւ Քո ողորմությունն իջեցնելու նրանց մոտ, որոնք էլ Քո կամքի համաձայն շահելով Քո տված մնասը՝ Քեզանից բազմապատիկն առնեն: Տե՛ր, սարկավագներին, դպիրներին, մեր եկեղեցիների ողջ հավատացյալներին պարկեշտություն եւ ուսման սեր պարգեւի՛ր, որպեսզի յուրաքանչյուրը, ինչ կոչման կանչված է, նրանում անարատ մնա, արժանապես ծառայի Քո Սուրբ Եկեղեցուն եւ Քո կողմից կոչվի բարի, ազնիվ եւ հավատարիմ ծառա: Տե՛ր, Քո փառքի եւ հաճույքի համար ընդունի՛ր աշխատավոր-

ների արդյունքը եւ Քո Սուրբ Եկեղեցուն տրվող նվերները, եւ նրանց փոխարենը ըստ Հոգու եւ ըստ մարմնի բազմապատիկը տո՛ւր եւ արժանի՛ արա այն երանությանը, որ ողորմածներն են ժառանգում:

Տե՛ր, մեր ժողովրդի իշխաններին եւ գլխավորներին Քո Հանդեպ բարեպաշտություն եւ սերտ Հավատ, միմյանց Հանդեպ՝ սեր եւ միաբանություն, աղքատների ու փորձանքի մեջ եղողների Հանդեպ՝ գութ եւ խնամածություն տո՛ւր: Քաղցր եւ սիրելի դարձրո՛ւ նրանց բոլոր իշխողների եւ բռնավորների աչքում, որպեսզի Քո Եկեղեցուն պարծանք եւ ուրախություն լինեն, Հասարակությանը՝ ձեռնտու եւ մխիթարություն, Հաճելի ծառաներ Քեզ եւ Քեզնից Քո բոլոր սրբերի Հետ վարձ ստանան:

Տէ՛ր, հիշի՛ր մեր ամբողջ ազգին՝ Քո փոքրիկ հոտին, ամենքին, ուր էլ որ լինեն՝ մեծերին եւ փոքրերին, տղամարդկանց եւ կանանց. եւ Քո մեծ ողորմածութեամբ այցելի՛ր բոլորին: Թո՛ղ բոլորը սիրով եւ խաղաղութեամբ, լուսավորչականդ հավատով եւ առաքինի գործով, ապահով կյանքով եւ բարվոք կենցաղավարութեամբ ապրեն: Բոլորին ձեռնտու եւ օգնական եղի՛ր ամեն ժամանակ՝ ննջելիս եւ արթնանալիս, տանը եւ ճանապարհին, ծովում եւ ցամաքում, առնելիս եւ տալիս, աշխատելիս եւ վաստակելիս, եւ նրանց բոլոր օգտակար եւ անմեղածին գործերը հաջողի՛ր ու բարի ավարտի հասցրո՛ւ:

Այլեւ հիվանդներին եւ ցավագարներին առողջացրո՛ւ, տրտմյալներին եւ վշտացածներին

սփոփի՛ր եւ ուրախացրո՛ւ։ Բանտարկեալներին եւ գերեալներին ազատի՛ր։ Տկարներին փրկի՛ր։ Կարիքավորների հոգեւոր եւ մարմնավոր կարիքները բավարարի՛ր։ Բոլոր անճարներին եւ անօգնականներին օգնության հասի՛ր եւ այցելի՛ր։ Մեղքի մեջ անդարձներին եւ համառներին դարձրո՛ւ իրենց չար ճանապարհներից եւ Քո մեծ ողորմությամբ բոլորին ողորմի՛ր եւ խաղաղության մեջ պահի՛ր, որպեսզի բոլորին ողորմելով՝ միշտ բոլորից փառավորվես։ Այլեւ խնդրում եմ Քեզանից, Տե՛ր եւ Աստված իմ, որպեսզի ամբողջ աշխարհին խաղաղություն տաս, թագավորներին՝ հաշտություն, ենթականերին՝ սեր եւ հնազանդություն, քաղաքներին, գավառներին եւ գյուղերին՝ շենություն եւ ապահովություն, այգիներին եւ անդաստաններին՝ պտղաբե-

րութիւն, եւ բոլոր բարիքներին՝ լիութիւն եւ առատութիւն։ Այլեւ Քո ողորմածութեամբ ամբողջ աշխարհից եւ ազգերից եւ մանավանդ Հայոց երկրից եւ ազգից ողջ ցասումն ու զանազան ճախորդութիւնները՝ հիվանդութիւններն ու պես-պես ցավերը, սովը, սուրը, մահտարաժամը եւ մյուս բոլոր վշտաբեր ու վնասաբեր պատահարները, որոնք Քո ամենազոր հրամանով շարժվելով մեր մեղքերի համար գալիս են մեզ վրա, վերացրո՛ւ, որպեսզի ամեն ինչում եւ ամենքի մեջ Քո անունը փառավորվի Հավիտյանս Հավիտենից. Ամեն։

Աղոթք՝ ուղղված ամենասուրբ Մարիամ Աստվածածնին

Գլուխ Թ

Տեր Աստծո եւ քո Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի ողորմության դուռը վշտագնյալ անձամբ այսքան բախելուց հետո այժմ լալագին դեմքով քեզ եմ դիմում, քո մաքուր ոտքերին փարվում եւ մայրական ողորմությանդ դուռը բախում, ո՛վ ամենօրհնյալ Սուրբ Աստվածածին Մարիամ: Ինչ որ քո Որդուց խնդրեցի, խնդրում եմ նաեւ քեզանից: Ինչ որ հուսացի Նրանից ստանալ, հույս ունեմ նաեւ քեզնից ընդունել, քանզի դու հարս եղար ա-

մենակալ Հայր Աստծո, Ով ամենակարող եւ ամենաբավ է: Մա՛յր եղար Աստծո Որդուն, Ով ամեն ինչում ողորմած է եւ մարդասեր: Բնակարան եղար Աստծո Հոգու, Ով ամեն ինչով հարուստ է եւ առատ: Միանգամայն շտեմարան եւ գանձարան եղար Ամենասուրբ Երրորդությանը, Ով ամենայն բարության աղբյուր է եւ երկնավորների ու երկրավորների լցուցիչ: Արդ, ո՛վ Սուրբ Մարիամ Աստվածածին, Հայր Աստված այնքան սիրեց քեզ, որ մինչեւ անգամ Իր Միածին Որդուն, որով արարել է բոլոր արարածներին, քեզ շնորհեց եւ քո Որդին դարձրեց, ու ի՞նչ պիտի խնայի քեզանից: Որդին Աստված այնքան սիրեց քեզ, որ մինչեւ անգամ բնակվեց քո արգանդում եւ բազմեց քո գրկում, եւ Նա, Ով բոլորի կերակրիչն էր՝ կերակրվեց քո ստինքնե-

րից: Նա, Ով քո Աստվածը եւ Տերն էր, եղավ քո Որդին եւ քեզ Մայր կոչեց, եւ ի՞նչ պիտի խնդրես Նրանից, որ խնայի քեզանից: Հոգին Աստված, որ այնքան սիրեց քեզ եւ անգամ Իր էակցին քե՛զ վստահեց, եւ Ինքը, որ ամեն ինչի զարդարիչն է, իջավ քեզ վրա եւ Իր անսպառելի շնորհների օթարան դարձրեց քեզ: Էլ ի՞նչ է քեզ պակասում, որ դու չունես: Քանի որ ճշմարտապես հավատում եմ, որ ըստ հրեշտակի խոսքի, Տերը եւ ամեն ինչի շնորհատուն քեզ հետ է, քո Որդին է եւ քո գրկում է: Ինչ որ քո Որդին ունի՝ քոնն է, եւ ինչ որ խնդրես Նրանից՝ չի խնայի: Դու ում կամենաս, կարող ես տալ, ինչպես քո որդին է ասում Սողոմոնի բերանով, թե. «Խնդրի՛ր, մայր իմ, որովհետեւ ինչ էլ որ խնդրես, չեմ դարձնի իմ երեսը»: Ուրեմն, ո՛վ Սուրբ Մարիամ Աստվածածին, ա-

բարածները Աստծուց հետո քեզնի՛ց են ակնկալիք սպասում։ Դու ես տրտմածների ուրախությունը, փորձանքի մեջ եղողների փրկիչը, հավատացյալների օգնականն ու մխիթարությունը եւ մեղավորների հույսն ու ապավենը։ Այս մտքով էլ քո սիրելի Որդին խաչի վրա քեզ կտակեց Իր հավատացյալներին՝ Հովհաննեսի միջոցով, ասելով, թե. «Ո՛վ դու կին, ահա՛ քո որդին», եւ իմ հավատացյալները քոնն են եւ այսուհետեւ քեզ են հանձնվում։ Հովհաննեսի անունով մեզ՝ հավատացյալներիս, նույնպես ասաց, թե. «Ահա ձեր մայրը», ինչ որ ցանկանաք՝ այսուհետեւ նրանից խնդրեցեք։ Արդ, ո՛վ ողորմության Մայր՝ Սո՛ւրբ Մարիամ Աստվածածին, եւ ես մեկն եմ քո սիրելի Որդուն հավատացողներից, որ հոգով եւ մարմնով ողորմելի եւ ամեն ինչում թերի

լինելով՝ կարոտ եմ քո մայրական գթությանը, նեղված եւ վշտացած հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից՝ կարոտ եմ քո օգնությանը: Մեղավոր եւ ամեն ինչում հանցավոր՝ կարոտ եմ քո ձեռնտվությանն ու հուսատրությանը, որի համար, ո՛վ Սուրբ Աստվածածին, ընկնում եմ քո առաջ եւ աղաչում քեզ՝ ուրախացրո՛ւ քո տառապյալ ծառային եւ մխիթարի՛ր: Քո աննվազելի շնորհներով լցրո՛ւ իմ հոգու եւ մարմնի դատարկությունը: Քո չտկարացող զորությամբ փրկի՛ր ինձ հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից ու բոլոր փորձություններից: Քո սուրբ եւ անարատ կուսությամբ սրբի՛ր եւ մաքրի՛ր ինձ իմ բոլոր մեղքերից, եւ մեղավոր ծառայիս համար միջնորդ ու բարեխոս եղի՛ր առ Միածին քո Որդին, որպեսզի ընդունի իմ աղաչանքները, որ մատուցեցի Նրան, եւ

կատարի իմ խնդրանքները: Ների սխալներս եւ թողություն շնորհի իմ բոլոր մեղքերին, վերստին ինձ ընդունի Իր սիրո եւ խնամքի մեջ, եւ որքան կենդանի եմ, Իր կամքին համաձայն պահի, եւ այս կյանքից հետո արժանացնի Իր օրհնյալ տեսությանը: Որովհետեւ անկեղծ հավատում եմ, ո՛վ Մայր ողորմության, որ եթե մի անգամ քո սիրելի Որդուն ինձ համար դիմես, լիովին ուրախություն է եւ ամեն ինչում ապահովություն: Եթե մի անգամ մաքուր ստինքներդ ցույց տաս Նրան, կատարյալ փրկություն է ինձ եւ ամեն ինչում ազատություն: Եվ եթե քո սուրբ արտասուքներից մեկ շիթով (որ հեղեցիր նրա խաչելության ժամանակ) հիշեցնես Նրան, իմ բոլոր մեղքերին թողություն է եւ բոլորովին կյանք հավիտենական: Այն բաները, որոնք քեզ՝ ողորմության առատագութ

Մորդ ամեն ինչում դյուրին եւ կարելի են, ինձ՝ քո ողորմելի ծառային, ամեն ինչում պիտանի են եւ հարկավոր: Եվ ես քեզնից ողորմություն գտնելով կփառավորեմ քո Միածին Որդուն՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ եւ ողորմության Մորդ գոհությամբ կբարեբանեմ հավիտյանս հավիտենից. Ամեն:

Աղոթք եւ Հառաչանք՝ ուղղված Աստծո սրբերին եւ Հայոց ազգի Հատուկ լուսավորիչներին եւ երախտավորներին

Գլուխ Ժ

Ի՛մ մեղավոր անձի եւ խեղճ ազգիս համար ամենագթած եւ ողորմած Աստծուն մատուցած այսքան Հառաչանքներից, աղոթքներից ու պաղատանքներից հետո այժմ մեծակական ողբով եւ լալագին աչքերով ձեզ եմ դիմում եւ ձեր սիրո ու գթության դռներն եմ բախում, ո՛վ դուք՝ Աստծո երջանիկ սրբեր եւ մեր Հատուկ բարեկամներ, ո՛վ դուք՝ Քրիստոսի սիրելիներ եւ

մեր ճշմարիտ բարերարներ, ո՛վ դուք՝ Աստծո հաճելի ծառաներ եւ մեր սրտացավ տերեր, Քրիստոսի համարձակ եւ հավատարիմ խորհրդակիցներ, բազմերախտ հայրեր ու գթառատ ծնողներ, ո՛վ մեր ազգի հարազատներ, նախածանոթներ, դաստիարակներ եւ լուսավորիչներ։ Ձեզ են ուղղված հառաչանքներս, Քրիստոսի սրբազան առաքյալներ՝ սուրբ Բարդուղիմեոս եւ Թադեոս, սուրբ Գրիգոր Լուսավորիչ, մեր Սուրբ Լուսավորչի սուրբ եւ սրբածին Որդիներ, Թոռներ եւ շառավիղներ՝ Արիստակես, Վրթանես, Հուսիկ, Գրիգորիս եւ Դանիել, սուրբ Ներսես, Իսահակ, Մեսրոպ եւ Հակոբ հայրապետներ, Քրիստոսի սուրբ եւ անարատ հարսներ՝ Հռիփսիմյանք եւ Գայանյանք։ Մեր սուրբ թագավորներ՝ Աբգար եւ Տրդատ, սուրբ Ոսկյանք, Սուքիասյանք

եւ Վարդանանք։ Դուք մեր երկրից եւ ազգից եք եւ մեր երկրում Նահատակվեցիք, որովհետեւ դուք՝ որպես Մովսես եւ Հեսու, մեզ ազատեցիք անմարմին փարավոնից եւ նրա եգիպտական գործերից։ Դո՛ւք բերեցիք մեզ ի վերուստ տրված աստվածային կտակարանների պատգամները։ Դո՛ւք լուսավորեցիք մեզ Հավատով եւ աստվածպաշտությամբ։ Դո՛ւք մեզ աստվածածանոթ դարձրեցիք եւ բացեցիք մեր բերանները՝ աղոթելու առ Աստված։ Դո՛ւք մեր ազգի փրկության համար այնքան սարսռելի չարչարանքներ կրեցիք եւ հեղեցիք ձեր պատվական ու սուրբ արյունը, եւ Աստծուն արժանի պատարագ ընծայեցիք ու Նրան մեզ հետ հաշտեցրեցիք։ Դո՛ւք ձեր վարդագույն արյամբ ներկեցիք մեր երկրի հողն ու քարերը, եւ դրանք տվեցիք մեզ՝ մեր հոգիների եւ մար-

մինների բժշկության համար։ Մեր երկրում ամփոփված են ձեր հրաշագործ եւ կենդանի նշխարներն ու մարմինները, որոնց վրա ձեր անունով կառուցվեցին հրաշալի եւ աստվածազարդ տաճարներ ու եկեղեցիներ, որոնցից տեսակ-տեսակ շնորհներ եւ զորություններ էին ելնում եւ դեռ ելնում են։ Հավատով դրանց դիմողները հոգու եւ մարմնի պես-պես բժշկություններ ու շնորհներ են ստացել եւ ստանում են։ Սրանք Աստված հայոց ազգին տվեց իբրեւ հատուկ պարծանք եւ ապավինության վայր։ Արդ, ո՛վ մեր բազմերախտ հայրեր եւ մեր հոգիների ու մարմինների լուսավորիչներ, զարթնե՛ք եւ տեսե՛ք ձեր անունով կառուցված վանքերի ու եկեղեցիների խեղճությունը։ Նայե՛ք տարբեր թշնամիների կողմից նրանց կրած տառապանքներին։ Նրանց մեծ մա-

սը ամայացել եւ անշքացել է: Նրանց վրա կառուցված ձեր բազմահրաշ դամբարաններն անպատվվել ու անարգվել են, իսկ մեր ազգն էլ՝ ամեն տեղից անտեր ու անօգնական, մատնվել խստասիրտ տերերի ձեռքը:

Արդ, էլ ո՞ւմ պիտի դիմենք, ո՞ւմ պիտի պատմենք մեր վիշտն ու տառապանքը եւ կամ մեզ համար ո՞ւմ պիտի ուղարկենք Աստծո մոտ՝ որպես միջնորդ եւ բարեխոս, եթե ոչ ձեզ՝ մեր հատուկ բարեկամներին ու ծանոթներին, Աստծո հաճելի ծառաներին եւ սիրելիներին: Քանի որ մինչ Աստված բարկանում էր հին ժողովրդի վրա, նրանք Աբրահամին, Մովսեսին, Դավիթին եւ իրենց մյուս նախնիներին էին հիշում եւ որպես միջնորդ ուղարկում Աստծո մոտ, ինչպես հայտնի է երեք մանուկ-

ների եւ շատ ուրիշների դէպքում, ու Աստված էլ նրանց նախնիների սիրո եւ միջնորդության համար բարկությունից դառնում եւ ներում էր ժողովրդին, ինչպես Դավիթն է վկայում, թէ «Աստված ասաց՝ նրանց կոչնչացնեի, եթէ ընտրյալ Մովսեսն իմ առաջ չլիներ», որովհետեւ Մովսեսը Տիրոջ մոտ գնաց եւ ցրեց Նրա բարկությունը՝ ասելով. «Եթէ պիտի թողնես Քո ժողովրդի մեղքերը, թո՛ղ, ապա թէ ոչ՝ ինձ էլ ջնջի՛ր Քո Կյանքի Գրքից»։ Եվ Աստված Ինքն է բազմիցս ասում ժողովրդին, թէ «Իմ սիրելի Աբրահամի եւ Մովսես ու Դավիթ իմ ծառաների համար ձեզ ողորմեցի»։ Արդ, ո՛վ մերազգի Աստծո սրբեր, դո՛ւք էլ Աբրահամ, Մովսես եւ Դավիթ եք, որովհետեւ Աստված այս փոքր հոտի վրա ձե՛զ իշխան, առաջնորդ, վերակացու եւ հովիվ կարգեց, ուստի դո՛ւք եք պար-

տավոր Հոգալ, միջնորդել եւ աղոթել մեզ համար առ Աստված, ինչպես նրանք էին անում իրենց ժողովրդի համար։ Ո՛վ երանելիներ, քանի որ դուք այս կյանքում մեզ համար այնքան տքնեցիք՝ քարոզելով, պահեցողությամբ, աղոթելով, պես-պես նեղություններ եւ զանազան չարչարանքներ կրելով, մինչեւ անգամ՝ ձեր արյունը հեղելով։ Այժմ դուք, ազատված աշխարհի տառապանքներից, փառավորված եք երկնքում եւ Աստծո մոտ համարձակություն ունեք, ուստի առավել եւս պարտավոր եք Հոգալ մեր մասին, օգնել եւ միջնորդ ու բարեխոս լինել առ Աստված եւ Նրա սերն ու քաղցրությունը շարժել մեր հանդեպ։ Ուրեմն, ձեր ոտքերի առջեւ եմ նետում իմ թախծյալ անձը, անարժան բերանովս համբուրում ձեր սուրբ եւ շնորհատու նշխարները, լիզում ձեր

հրաշագործ եւ խնդրակատար դամ-
բարանների Հողը եւ արտասվաթոր
աչքերով Հայցում ձեզանից, ո՛վ
Քրիստոսի սիրելիներ եւ մեր Հատուկ
ծանոթներ ու բարեկամներ։ Ո՛վ մեր
բազմերախտ Հայրեր եւ գթաշատ
ծնողներ, աղաչում եմ ձեզ, նայեցե՛ք
մեր խեղճությանն ու տառապանք-
ներին, մեր վանքերին ու եկեղեցինե-
րին, ողորմեցե՛ք ու օգնեցե՛ք մեզ։ Ե-
թե մեր մեղքերի պատճառով չեք
ինայում մեզ, գոնե ինայեցե՛ք ձեր
պատվական նշխարների եւ սուրբ
դամբարանների Համար, որոնք կո-
խոտվում եւ ծաղրվում են թշնամինե-
րից եւ անսուրբ մարդկանցից։ Եթե
մեր անօրինությունների պատճա-
ռով մեզ բարձիթողի եք արել, գոնե
մեզ Համար կրած ձեր կսկծալի եւ
սարսռելի չարչարանքները եւ մեզ
Համար Հեղած ձեր պատվական ա-
յունը մտաբերե՛ք, Հիշեցե՛ք եւ ողոր-

մեցէ՛ք մեզ։ Մանավանդ դո՛ւ, ո՛վ մեր բազմերախտ Հայր, մեր գթառատ ծնող եւ մեր Հոգիների ու մարմինների լուսավորիչ սո՛ւրբ Գրիգոր, Հիշի՛ր մեր փրկութեան համար քո երկամյա անտանելի եւ անօրինակ չարչարանքներն ու վիրապում թունաւոր էակների մէջ տասներեքամյա անըմբռնելի տառապանքներդ, անհանգիստ տքնութիւններդ եւ անդադար հսկումներդ։ Քեզ մոտ ա՛ռ մեր սրբազան առաքյալներին եւ լուսավորիչներին, որոնցից նաեւ դու շառավիղեցիր, Քրիստոսի սուրբ եւ մաքուր օրիորդներին, ովքեր քեզ հետ հանդիսակից եւ պսակակից եղան, իսկ մեզ՝ ավետաբեր եւ լուսաբերներ, քո սուրբ եւ բարեբողբոջ որդիներին եւ թոռներին, ովքեր աստվածատունկ որթից ընձյուղվելով՝ քո բանավոր այգին մշակեցին եւ Սուրբ Հոգու կենդանարար ջրով ոռոգե-

ցին։ Քեզ մոտ ա՛ռ մեր սուրբ թագավորներին եւ սուրբ զորավարներին, ովքեր քեզ հետեւելով՝ քո կողմից քարոզված հավատքի համար սպառազինվեցին հոգեւոր ու մարմնավոր թշնամիների դեմ եւ քո ժողովրդի համար հանդես ելան ու նահատակվեցին։ Դուք, որ բոլորդ միաբանված մտնում եք Աստծո մոտ, ձեր մշտանվեր եւ անդառնալի աղոթքներով միջնորդ եւ բարեխոս եղե՛ք Նրա մոտ եւ խնդրեցե՛ք, որպեսզի ողորմի եւ այցելի մեզ, վերանորոգի մեր ազգի եւ եկեղեցիների հնութիւնը, ցիրուցան եղած իր հոտը խնամքի իր գոգում եւ մեր սուրբ եկեղեցիների ծոցում ժողովի։ Ի՛նքը հովվի եւ պահպանի մեզ բոլոր հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից եւ վերակացու լինի իր ամենազոր զորութեամբ։ Եվ մանավանդ ինձ՝ ձեր ծառային, օգնական եղե՛ք

եւ փրկեցե՛ք բոլոր փորձանքներից եւ մանավանդ ներկա փորձանքներից։ Եվ Աստծուց խնդրեցե՛ք, որ իմ բազմատեսակ մեղքերին թողություն շնորհի եւ որքան կենդանի եմ, Իր կամքին հաճելի պահի։ Եվ այստեղից հետո, ձեր միջնորդությամբ, արժանացնի Իր օրհնյալ տեսությանը, որպեսզի ես էլ ձեզ հետ փառավորեմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, հավիտյանս հավիտենից. Ամեն։

Աղոթք՝ ուղղված Աստծո բոլոր սրբերին

Գլուխ ԺԱ

Ո՛վ Աստծո բոլոր սրբեր, Հաճելի ծառաներ եւ Նրա կամքի Հարազատ կատարողներ, անարատ տաճարներ, մաքուր բնակարաններ եւ Ամենասուրբ Երրորդության բերկրալի անդորրություններ: Մարմնով անմարմիններ եւ երկրի վրա Հրեշտականմաններ, Ադամի տոհմից ծնվածներ, սակայն երկնքում ապրողներ եւ Հրեշտակներին դասակցվածներ: Երկրի վրա Հալածվածներ, նեղվածներ եւ չարչարվածներ, իսկ երկնքում՝ փառավորվածներ, պսակվածներ եւ Քրիստոսի Հետ թագավորածներ: Հավա-

տացյալների պարծանք եւ հրեշ-
տակների ուրախութիւն, աշխարհի
լուսավորիչներ եւ վերին գավառի
զարդեր, երկրավորներիս համար
ապավէններ ու օգնականներ, երկ-
նային զորքերին՝ զինակիցներ եւ
պարակիցներ։ Մեղավորների հույս
եւ ակնկալութիւն ու առ Աստված
համարձակ բարեխոսներ։ Սուրբ
Հովհաննես Մկրտիչ, Սուրբ Ստե-
փաննոս Նախավկա, սուրբ առա-
քյալներ եւ մարգարէներ, սուրբ հայ-
րապետներ ու վարդապետներ,
սուրբ մարտիրոսներ եւ ճգնավոր-
ներ, սուրբ կույսեր ու միանձնուհի-
ներ եւ բոլոր հին ու նոր, հայտնի ու
անհայտ սրբեր։ Ա՛ռ Քրիստոս ձեր
սիրո եւ մեր հանդէպ ունեցած ձեր
սիրո ու ազգակցութեան, հանուն
Քրիստոսի անվան եւ մեր փրկու-
թեան ձեր կրած սոսկալի չարչա-
րանքների, ձեր հեղած պատվական

արյան, եւ ձեր ունեցած ու ունալիք երախտիքների եւ բարերարութիւնների՝ աղաչում եմ ձեզ, ողորմեցէ՛ք ձեր տառապյալ ծառայիս, եւ տկարութիւնս ժամանակ օգնութեան հասէ՛ք, որովհետեւ դուք փորձառու եք եւ գիտէք իսկ, որ մեր բնութիւնը սխալական է եւ դիւրասայթաք, մեր մարմինը՝ դիւրախաբ, մեղասեր եւ հոգուն վնասակար ամեն ինչ անհագ ցանկացող։ Այս աշխարհն ամեն ինչում որոգայթավոր է եւ լի սոսկատեսիլ ու թունավորված հրապոյրներով։ Այն բազմատեսակ պատրանքներ, խաբեութիւններ ունի եւ ամեն տեսակ փորձութիւնների տուն է, իսկ դրդող եւ հորդորող թշնամին՝ միշտ առընթեր։ Արդ, ո՛վ երանելիներ եւ փառավորվածներ, դուք այս ամենը տեսաք եւ փորձ ունեցաք, սակայն Աստծո շնորհներով զորացած՝ բոլո-

րին ոտնակոխ արեցիք եւ քաջությամբ հաղթեցիք ու նրանց որոգայթները փշրելով փրկվեցիք եւ ելաք երկինք ու հավիտենական հանգիստ առաք։ Ուրեմն, դուք, որ փորձառու եք, կարող եք փորձության մեջ եղողներիս օգնական լինել, որի համար աղաչում եմ ձեզ, ո՛վ Աստծո սրբեր, օգնեցե՛ք ինձ փորձության մեջ եղող եւ մեղավոր ձեր ծառային, փրկեցե՛ք բոլոր որոգայթներից ու փորձություններից, հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից եւ պաշտպանեցե՛ք ինձ բոլոր մեղսառիթ պատահարներից եւ ընդհանրապես հոգեվնաս ընթացքից։ Բարեխոսեցե՛ք առ Աստված, որպեսզի ների իմ բոլոր սխալները, թողնի իմ բոլոր մեղքերը եւ, որքան մարմնի մեջ եմ, պահպանի Իր կամքի համաձայն։ Եվ այս կյանքից հետո թող արժանացնի Իր քաղցր եւ

օրհնյալ տեսութիւնը, որպեսզի ձեզ հետ նաեւ ե՛ս փառավորեմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն հաւիտյանս հաւիտենից. Ամեն:

Աղոթք՝ ուղղված երկնային զինվորություններին

Գլուխ ԺԲ

Արդ, ձեզ է ուղղված աղաչանքս, ո՛վ երկնայիններ եւ անմարմիններ, հրեղեններ եւ հոգեղեններ, արփիափայլներ եւ լուսատեսիլներ, մաքուր եւ անարատ մտքեր, Աստծուն սրբաբանող եւ Ամենասուրբ Երրորդության անդադար փառաբանող սրբեր, որ միշտ Նրա փառքի Աթոռի առջեւ եք եւ Նրա հրամանի անվրիպելի սպասավորներն եք: Դուք աշխարհի վերակացուներ ու պահապաններ եք եւ մարդկանց համար անդադար միջ-

նորդներ ու բարեխոսներ։ Դուք ունեք Աստծուց գրված, մեղավորների համար Նրան ուղղված ձեզ հատուկ պաղատանքներ, ասելով, թե՝ «Ողորմի՛ր, Դո՛ւ ես ստեղծել, կորստյան մի՛ մատնիր եւ Քո ձեռքի գործն անտես մի՛ արա»։ Արդ, ո՛վ երջանիկներ եւ փառավորյալներ, Աթոռներ, Քերովբեներ, Սերովբեներ, Տերություններ, Զորություններ, Իշխանություններ, Պետություններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ եւ Դո՛ւ՝ անարժան ծառայիս պահապան եւ վերակացու հրեշտակ։ Այժմ, խոնարհյալ անձամբ եւ ամոթխած դեմքով, աղաչում եմ ձեզ։ Վերակացու եւ պահապան եղե՛ք մեղավոր ծառայիս եւ օգնեցե՛ք ինձ ամեն ժամ։ Փրկեցե՛ք

ինձ Հոգեւոր եւ մարմնավոր թշնամիներից, բոլոր վտանգներից եւ փորձութիւններից, մանավանդ ներկա փորձութիւններից (եթե ունես)։ Ինչպես ձեր սովորութիւնն է, մեղավորիս աղոթքներն ու պաղատանքները մատուցե՛ք առ Աստված եւ ինձ համար Նրան բարեխոսեցե՛ք՝ ասելով. «Ողորմի՛ր, Դու ես ստեղծել, կորստյան մի՛ մատնի՛ր», որպեսզի ձեր խնդրանքներով ների իմ սխալները, ջնջի հանցանքներիս ձեռագիրը եւ ինձ գրի Կյանքի Գրքում։ Եվ այստեղից հետո ձեր միջնորդութեամբ ինձ կանգնեցնի աջակողմյան դասում եւ կանչի դեպի Իր հավիտենական արքայութիւնը, որպեսզի ձեզ հետ փառավորեմ Հորը, Որդուն եւ Սուրբ Հո-

գուն Հավիտյանս Հավիտենից. Ամեն։

Աղոթք՝ ուղղված Փրկչական Սուրբ Խաչին

Գլուխ ԺԳ

Ա եծ երկյուղածությամբ, սարսափած անձամբ եւ ճշմարիտ հավատով այժմ խոնարհված ծնրադրում եմ քեզ սուրբ եւ ամենազոր Խաչի եւ մեր Քրիստոս Աստծո անպարտելի նշանի եւ տառապյալ քո ծառայի համար օգնություն հայցում քեզանից, որ ունես բոլոր բարությունները եւ ամենաբավական ու ամենակարող ես, քանի որ դո՛ւ, ո՛վ փառաբանելի եւ ամենասուրբ Խաչ, աթոռն ես ամենահարուստ եւ ամենողորմ այն Թագավորի, որ երկնքում, լուսեղեն աթոռին բազմած, թեպետ միշտ

բաշխում էր եւ այժմ էլ առատապես բարիքներ էր բաշխում Իր բոլոր արարածներին ու ամենքին, ըստ իրենց կարիքների, բավարարում, սակայն փեսայության եւ Իր սրտի ուրախության օրը, երբ բազմեց Քո վրա, այնքան սիրեց, հավանեց Քեզ ու զվարճացավ, որ նույնիսկ ասաց, թե. «Հավիտյանս հավիտենից այս է իմ հանգիստը, սրա վրա կբնակվեմ, որովհետեւ սա ինձ հաճելի եղավ»: Եվ մեծ ուրախությունից չբավարարվեց այն ընդհանուր բարիքներով, որ միշտ Իր արարածների վրա էր հեղում, այլ բացելով Իր մարմնի, այսինքն՝ ձեռքերի, ոտքերի եւ կողերի աստվածային գանձարանի դռները՝ յուրաքանչյուր ակունքից տեսակ-տեսակ բարիքների եւ շնորհների առատահոս աղբյուր բխեցրեց եւ տարածելով Իր ամենառատ ձեռքերը՝ հեղեց եւ անչափա-

պես բաշխեց բոլորին։ Մինչեւ իսկ Իր կենդանարար մարմինն ու արյունը չխնայելով՝ մեզ տվեց ուտելու եւ ըմպելու համար՝ կանչելով բոլորին, թե. «Եկե՛ք, կերե՛ք իմ հացից եւ խմե՛ք իմ գինին, որքան որ բազմած եմ ողորմության եւ ուրախության այս աթոռին անխնա տալիս եմ»։ Արդ, ո՛վ հանգստյան վայր եւ Աստծո ողորմության սիրելի աթոռ։ Եվ ես մեկն եմ քո եւ քեզ մոտ բազմած Թագավորի հավատացյալներից եւ երկրպագողներից, որ աղքատ եմ, քաղցած, ծարավ եւ կարոտ ամեն ինչի, որի համար աղաչում եմ քեզ, որ ինձ ողորմես եւ այդքան անպատմելի բարիքներից (որոնցով լիացան երկնավորներն ու երկրավորները) մի մաս էլ ինձ ողորմելիս մատուցես, որ բավակա՛ն է իմ հոգու եւ մարմնի բոլոր կարիքները բավարարելու համար։ Դո՛ւ անոթ,

տուփ եւ բժշկարան ես այն Բժշկապետի, Ով Իր աստվածահրաշ զորությամբ մեր ամբողջ բնությունը անմարմին օձի թույնից ստացած մահաբեր հիվանդություններից եւ զանազան ցավերից բժշկեց ու առողջացրեց եւ հավիտենական կենդանություն շնորհեց: Բոլոր հոգեկեցույց եւ ամենազորեղ դեղորայքները քեզ մոտ են ամփոփված եւ ամբարված: Ահա եւ ես, որ Քո ծառաներից եւ Քո վրա բազմած Բժշկապետի կողմից բժշկվածներից մեկն եմ, վերստին վիրավորվել եմ նույն հին թշնամուց եւ այդ նույն չարի թույնից ախտավորվել պեսպես ցավերով ու հիվանդություններով կարոտ եմ քո շնորհներին, որի համար աղաչում եմ քեզ, ով ամենաբավական բժիշկ, որպեսզի այդքան ամենատարբեր բժշկարար Քո շնորհներից մի շիթ ցողես ինձ վրա,

որ բավական է հոգիս եւ մարմինս բժշկելու եւ ինձ հավիտենական կենդանություն տալու համար: Դո՛ւ ես հաղթության գավազանը եւ անպարտելի զենքը մեր ամենազոր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, Ով քեզանով պատռեց աշխարհի մեղքերի ծովը, փարավոնացյալ թշնամուն նետեց դժոխքի անդունդը, Իր պատկերը նրա չար ծառայությունից ազատեց եւ վերին Երուսաղեմ հանեց: Քեզանով ջախջախեց աներեւույթ վիշապի եւ անմարմին գողիաթի գլուխը եւ իր ժողովրդին նրա խրոխտանքներից եւ բռնությունից ազատեց: Արդ, ինձ էլ, որ մեկն եմ իմ ամենազոր Փրկչի ծառաներից եւ քո միջոցով Նրա կողմից փրկվածներից, վերստին նույն թշնամին իր ամենաչար հնարքներով գերեց եւ իր չար գործերին ծառա դարձրեց ու միշտ

խրոխտալով ինձ վրա՝ ցանկանում է ինձ Հավիտյանս ծառայեցնել եւ դժոխքինը դարձնել: Որի Համար աղաչում եմ քեզ, ո՛վ ամենազոր Սուրբ Խաչ, խորտակի՛ր իմ թշնամու բռնությունը եւ ազատի՛ր ինձ նրա ծառայությունից: Քո Հովանու ներքո պահելով ինձ բոլոր նրանց Հետ, ովքեր պիտի փրկվեն, դեպի երկինք՝ դեպի Հավիտենական ազատություն եւ անտրտում ուրախություն տա՛ր: Ո՛վ ամենացանկալի եւ բոլորի Համար երկրպագելի Սուրբ Խաչ, դու ես աստվածների Աստծո, թագավորների Թագավորի եւ բոլոր արարածների Արարչի եւ Նախախնամողի կնիքը, նշանը, դրոշմը, քանի որ քեզանով է Աստված կնքում եւ նշում յուրայիններին եւ բաժանում օտարներից: Քեզանով է ճանաչում յուրայիններին եւ ճանաչվում նրանցից: Քեզանով

գրեց Ադամի եւ նրա սերունդների ազատության գիրը: Քեզանով նոր Իսրայելի սրտում հաստատեց իր նոր ուխտն ու օրենքը: Քեզանով որոշեց ավերել դժոխքը եւ ազատել հոգիները: Քեզանով դատավճռեց սատանայի եւ նրա բռնության կործանումը: Քեզանով հրամանագրեց երկնավորների եւ երկրավորների խաղաղությունը: Քեզանով դրոշմելով՝ յուրայիներին ազատում եւ պահպանում է հանկարծամահ սատակումից ու հավիտենական մահից եւ երկինք հանում եւ գրում Կյանքի Գրքում: Եվ գալիք ժամանակներում քեզ որպես նախագնաց իր առջեւ բռնած Հոր փառքով դատաստանի պիտի գա՝ բոլորին դատելու: Եվ քեզանով պիտի կնքի ամենահաստատուն եւ անսխալական այն վճիռը, թե. «Արդարները կգնան հավիտենական

կյանք, իսկ մեղավորները՝ հավիտենական տանջանք»:

Արդ, ո՛վ ամենաբարելի սեղան եւ ողորմության աթոռ, ո՛վ բազմատեսակ շնորհների օթարան եւ բոլոր ցավերի բժշկարան, ո՛վ ահարկու զենք եւ ամենազոր գավազան, ո՛վ ամենապաշտելի նշան եւ ամենաթագավոր Աստծո անլուծանելի կնիք եւ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Խաչ, այս բոլորը եւ առավել քան այս բյուրապատիկ պարգեւներն ու բարությունները, բժշկություններն ու կենդանարարությունները, ազատություններն ու փրկագործությունները, աստվածային տնօրինություններն ու ներգործությունները քեզանով եւ քո միջոցով բաշխվեցին եւ բաշխվում են, գործվեցին եւ գործվում են, կատարվեցին եւ

կատարվում են, որոնց գործիքը՝ միջնորդն ու շտեմարանը, դու ես, ո՛վ ամենասիրելի Խաչ մեր Քրիստոս Աստծո: Արդ եւ ես՝ ամենաթշվառս եւ ամենաողորմելիս, մեկն եմ քեզանով փրկված եւ բարիքներ ստացած եւ քեզանով դրոշմված եւ քեզ երկրպագող ծառաներից, որովհետեւ քեզանով վերածնվելով կենդանացա ու մեղքի հնությունից եւ մահաբեր ծառի մեռելությունից նորոգվեցի: Քեզանով դրոշմվեցի եւ կոչվեցի լինել Քրիստոսինը եւ հավիտենական կյանքի ժառանգորդը: Քեզանով դրոշմվելո՛վ բաժանվեցի օտարներից եւ Քրիստոսի՝ ճշմարիտ հովվի, ոչխար եւ հավատացյալ անդամագրվեցի: Քեզանով եմ կնքում եւ նշան հանում իմ դեմքը եւ միշտ ամրափակում հոգուս եւ մարմնիս բոլոր զգայարանները: Քեզանով եմ պարծենում միշտ եւ

ամեն ժամ Դու ես իմ Հույսն ու օգ-
նականը։ Եվ այժմ ընկնում եմ ամե-
նազոր սուրբ նշանիդ առաջ եւ խո-
նարհվելով երկրպագում, հոգուս շր-
թունքներով համբուրում պատվան-
դանիդ հողը եւ աղաչանքներով
խնդրում, որպեսզի սուրբ եւ աՀեղ
անունդ ու սոսկալի կնիքդ անջնջելի
եւ անբաժանելի պահես քո ծառայի
հոգուց եւ մարմնից եւ քո հովանու
ներքո՝ պահպանես ինձ հոգեւոր եւ
մարմնավոր վտանգներից։ Եր-
կրպագում եմ նաեւ քեզ հետ քո սր-
բերին, հրաշագործ գործակիցներին
աստվածակիր եւ կողամուխ սուրբ
Գեղարդին, սոսկալի սուրբ Բեւեռ-
ներին, աստվածաշոշափ փշե սուրբ
Պսակին եւ մեր Քրիստոս Աստծո
պատվական արյամբ ներկված
նշաններին եւ մեր Քրիստոս Աստծո
չարչարանքների Գործիքներին։
Դուք բոլորդ, որ շնորհների շտեմա-

ման եք, բարիքների աղբյուր, փրկության գործիք, ամենազոր նշաններ եւ թշնամու դեմ չտկարացող սրեր, ո՛վ շնորհատու եւ փրկագործ սուրբ նշաններ, ձեզ բոլորիդ խոնարհվելով մեծ երկյուղով եւ պատկառանքով երկրպագում եմ եւ աղաչում, ո՛վ շնորհատու եւ փրկագործ սուրբ նշաններ, ձեր ծառային միշտ օգնականներ, պահապաններ, հովանավորներ եւ վերակացուներ եղե՛ք ցերեկը եւ գիշերը, ննջելիս եւ արթնանալիս, նստելիս եւ գնալիս, գործելիս եւ հանգստանալիս եւ ամեն ժամ, որպեսզի ձեր հովանավորությամբ ամրափակվելով եւ պարսպվելով պաշտպանված եւ փրկված լինեմ բոլոր մեղքերից, դեւերի փորձություններից, մարդկանց անիրավություններից, չարախոհ եւ զրախոս լեզուներից, մարդակերպ գազաններից, թունավոր

եւ վնասատու կենդանիներից, երեւելի եւ աներեւույթ թշնամիներից, հոգեւոր եւ մարմնավոր վտանգից եւ բոլոր տեսակի որոգայթներից եւ չարահնար պատահարներից։ Եվ երբ հիշեմ ձեր սոսկալի անունները եւ խաչակնքեմ թող հալածվեն եւ չքանան, կորչեն եւ անհետանան բոլոր հնարքները՝ երեւույթները, ազդեցությունները, ծուղակները եւ չարի որոգայթները։ Եվ որքան ու որ ժամին էլ վեր կենան հոգով եւ մարմնով ինձ խաբելու եւ նենգելու, պարսպված եւ կնքված թող տեսնեն ձեր ամենասոսկալի անվամբ եւ ամոթահար ու գլխիկոր ետ դառնան։ Եվ որքան կենդանի եմ՝ ձեր սուրբ եւ հրաշալի անվամբ պաշտպանված եւ փրկված թող մնամ թշնամիների բոլոր որոգայթներից եւ բոլոր մեղսաւոր ընթացքներից, իսկ այստեղից հետո ձեզանով կնքված ներ-

կայանամ Քրիստոս իմ Աստծո առաջ, դասվեմ աջակողմյանների հետ ու լսեմ այն օրհնաբանյալ ձայնը, թե՝ «Եկե՛ք, իմ հոր օրհնվածներ եւ ժառանգեցե՛ք հավիտենական կյանքը»։ Այնժամ ես կփառավորեմ իմ Քրիստոս Աստծուն՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ, եւ ձեզ՝ սուրբ եւ փրկագործ նշաններ, գոհությամբ կփառաբանեմ հավիտյանս հավիտենից. Ամեն։

Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու եւ իմ շարադրողիս ճշմարիտ եւ ուղղափառ դավանությունը եւ վերջաբան աղոթք՝ ուղղված Սուրբ Երրորդությանը

Գլուխ ԺԴ

Արդ, ո՛վ ամենօրհնյալ Սուրբ Երրորդություն եւ մի Աստվածություն, քանի որ Դո՛ւ ես սկիզբն ու ավարտը, առաջինն ու վերջինը, ամեն ինչի ստեղծողն ու ավարտին հասցնողը, որի աղերսանքների փոքրիկ եւ լումայաչափ այս խոսքերը Քեզանով սկսելով՝

Քեզանով ավարտում եմ՝ սրանում խոստովանելով Քո Հանդեպ ունեցած իմ ճշմարիտ դավանությունն ու Հավատը: Ուրեմն, ճշմարիտ Հավատով խոստովանում եւ Հավատում եմ, աներկբա Հույսով Հուսա՛մ եւ անարատ սիրով սիրում եմ Քեզ, Սուրբ եւ անբաժանելի Երրորդությանդ՝ անսկիզբն եւ անվախճան, մի Աստված՝ անուր, աներբ, անժամանակ եւ Հավիտենական: Երկնավոր եւ երկրավոր բոլոր արարածներին ոչնչից միակ Ստեղծող: Բոլոր տերերի եւ թագավորների միակ Տեր եւ Թագավոր: Ամբողջ աշխարհի միակ Նախախնամող եւ Կառավարիչ, բոլոր բարիքների եւ արարածների Զարդարիչ եւ Աղբյուր: Ողջերի եւ մահացածների միակ Դատավոր: Արդարների միակ պսակիչ եւ մեղավորների դատապարտիչ, ում միա՛յն կարելի է

ծնրադրել եւ երկրպագել Հավիտյանս Հավիտենից:

Հավատում եմ Նույն եւ միակ Աստվածությանդ՝ բաժանված երեք անձերի՝ առանձին դեմքերով՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու: Ո՛չ թե երեք Աստված, այլ մի Աստված, մի Էություն, մի բնություն, մի կամք, մի տերություն եւ մի իշխանություն: Ոչ թե ձեզանից մեկը մեծ է եւ առաջ, եւ մեկը կրտսեր ու հետո, այլ որքան Հայրդ Հայր է, Քեզ հետ եւ Որդիդ Որդի է եւ Սուրբ Հոգիդ՝ Հոգի. էակից, բնությենակից եւ փառակից իրար:

Հավատում եմ Քեզ, Հայր՝ Աստված ճշմարիտ, անեղ, անծին եւ անսկիզբ, անսկզբնաբար եւ անժամանակորեն Որդուդ ծնող եւ Սուրբ Հոգուդ բխող:

Հավատում եմ Քեզ, Միածին Որդի՝ Աստված ճշմարիտ, անեղապես եւ անսկզբնաբար Հորից ծնված Հավիտյաններից առաջ: Իսկ ժամանակի մեջ Հոր կամքով եւ Սուրբ Հոգուդ Հավանութեամբ՝ Քո սեփական անձով իջար երկիր՝ Աստվածածին Սուրբ Կույս Մարիամի մեջ եւ նրա ամենամաքուր արյունից Քեզ համար մարմին վերցրեցիր եւ անճառապես միավորեցիր Քո Աստվածության հետ: Ապա, Դու, որ ճշմարիտ եւ կատարյալ Աստված էիր, նույնդ եւ եղար ճշմարիտ ու կատարյալ Մարդ՝ հոգով, մտքով եւ մարմնով: Մեկ անձ, մեկ դեմք, մեկ կամք եւ մեկ բնություն՝ անշփոթաբար միավորված երկու՝ աստվածային եւ մարդկային բնություններից: Ուստի եւ կոչվեցիր մեկ Քրիստոս, այսինքն՝ Աստված

եւ Մարդ։ Անարատ Կոյսի արգանդում իննամսյա ժուժկալութիւնից հետո, անսերմ հղացմամբ եւ անապական ծննդյամբ ծնվեցիր Քո առյալ մարմնով։ Երեսուն տարի հետո եկար Հորդանան գետը՝ Հովհաննեսից մկրտվելու։ Հոր վկայութիւնամբ եւ Սուրբ Հոգու իջմամբ դավանվեցիր Ճշմարիտ Աստված եւ Աստծո Որդի։

Այսպես Դու՝ մեր նույն Քրիստոս Աստվածդ, սկսեցիր տնօրինական խորհուրդդ իրականացնել. խոնարհաբար շրջեցիր երկրի վրա, փրկութիւն քարոզեցիր, իբրեւ մարդ՝ մարմնով հոգնեցիր, քաղցեցիր, ծարավեցիր, իսկ իբրեւ Աստված՝ մեծամեծ հրաշքներ գործեցիր։ Հետո, մեր փրկության համար, կամավոր եկար չարչարվելու եւ Դո՛ւ, միշտ կենդա-

նի եւ անչարչարելի Աստված նույն ստեղծված մարմնովդ, չարչարվեցիր, խաչվեցիր, մեռար եւ թաղվեցիր, մարմնովդ դրվեցիր գերեզմանում, իսկ հոգովդ դժոխք իջնելով՝ ազատեցիր հոգիներին։ Երեք օր հետո մեռելներից հարութիւն առար մարմնով եւ երեւացիր աշակերտներիդ։ Քառասուն օր հետո նույն այդ մարմնով համբարձվեցիր երկինք եւ նստեցիր Քո Հոր աջ կողմում, Ումից երբե՛ք չբաժանվեցիր։ Ի՛մ Քրիստոս Աստված, քանի որ թեպետ Կույսի արգանդում բնակվում էիր, ծնվում այրի մեջ, խոնարհաբար շրջում երկրի վրա, չարչարանքներ կրում, խաչին էիր բեւեռված եւ Քո վերցրած մարդկութիւնամբ ինչպես մեռյալ գերեզման էիր իջնում, սակայն Քո Աստվածութիւնամբ՝ Հորից եւ Սուրբ Հոգուց անբաժան, երկնքում բազմած էիր

քրովբեական աթոռին եւ երկրպագվում էիր բոլոր արարածներից, ինչպես եւ այժմ Աստվածությամբդ ու մարդկությամբդ երկրպագվում ես Հավիտյանս Հավիտենից: Ուստի, ինչպես Քո Աստվածությունն սկիզբ չունի, նույնպես եւ Քո մարդկությունը վախճան չունի, որովհետեւ Հիսուս Քրիստոս երեկ եւ այսօր նույնն է եւ Հավիտյան: Այլեւ հավատում եմ, որ նույն մարմնովդ ժամանակների վերջում Հոր փառքով պիտի գաս կենդանիներին եւ մեռելներին դատելու, որ եւ ամբողջ մարդկության հարությունն է: Եվ յուրաքանչյուրին ըստ գործերի պիտի հատուցես՝ արդարներին՝ հավիտենական կյանք, իսկ մեղավորներին՝ հավիտենական տանջանք:

Հավատում եմ Քեզ, Սուրբ Հոգի, ճշմարիտ Աստված բխած Հորից անսկզբնապես եւ անժամանակաբար: Իջնելով Հորդանան եւ վերնատուն՝ հայտնեցիր Քո Էակցի՝ մեր Քրիստոս Աստծո Աստվածությունը, մխիթարեցիր առաքյալներին եւ լցրեցիր անճառելի շնորհներով: Խոսեցիր օրենքների, մարգարեների եւ Ավետարանների մեջ: Եվ միշտ զանազան շնորհներով եւ հեգեւոր պարգեւներով լցնում եւ զարդարում ես Քո հավատացյալների եկեղեցին:

Արդ, այս է իմ հավատը՝ որով հավատում, խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ Ամենասուրբ Երրորդություն եւ մի Աստվածություն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի եւ երեք անձերից մեկին՝ մարդկային բնության փրկության

համար ժամանակների լրումին մարդացած Աստծո Որդուն:

Հավատում եմ նաեւ մեկ, Սուրբ Կաթուղիկե եւ Առաքելական Եկեղեցուն՝ հիմնված Քո Քրիստոս՝ միակ Վեմիդ վրա: Որում Հոր հետ հաշտության եւ աշխարհի մեղքերը վերացնելու համար պատարագվում ես Դու՝ Աստծո Գառ: Որում հանուն Ամենասուրբ Երրորդության մկրտվում ենք եւ ծնվում հավիտենական կյանքի որդեգրության համար: Որում Սուրբ Հոգուդ ներգործությամբ կատարվում են Քեզնից ավանդված սրբարար եւ հոգեկեցույց յոթ խորհուրդները: Որոնցից երեքը, այսինքն՝ Մկրտությունը, Դրոշմը եւ վերջին Օծումը, ըստ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ավանդության, վերստին ծնունդ են խորհրդանշում, իսկ չոր-

սը, այսինքն՝ Ապաշխարությունը, Կարգը, Պասկը եւ Հաղորդությունը՝ ծնունդ են ամեն ժամանակ, որոնցով սկզբնական եւ ներգործական, մահացու եւ ներելի մեղքերից ազատվում եւ արդարանում ենք: Թշնամու դեմ զորանում եւ արիանում ենք, պաշտպանվում նրա որոգայթներից, լուսավորվում եւ կատարելագործվում, եւ Հոգով միավորվում ենք միակ ու միշտ կենդանի գլուխ Քրիստոսի շուրջ: Եվ այս սուրբ եկեղեցում տոնում ենք երկնավոր եւ երկրավոր Քո բոլոր սրբերի եւ սիրելիների տոները: Հավատում ենք, որ ինչքան այս կյանքում ենք, եկեղեցում կարող ենք խոստովանությամբ, ապաշխարությամբ եւ բոլոր տոնելի սրբերի բարեխոսությամբ մեղքերի թողություն ստանալ: Հավատում ենք եկեղեցու միջոցով մտնել վերին Սիոն՝ եր-

կնքում գրված անդրանիկների եկեղեցի: Այլեւ հավատում եւ խոստովանում եմ Ամենասրբուհի Կույս Մարիամ Աստվածածնին: Ինսերմն հղացողին եւ անարատ ծնողին, եւ ծննդից հետո նույն անապական կուսությամբ մնացածին, Ով այս հավատով Քրիստոսին հավատացողների համար համարձակ միջնորդ եւ բարեխոս է առ յուրածին Որդին:

Արդ, դավանական խոսքիս ավարտին աղաչում եմ Քեզ՝ Սուրբ Երրորդություն եւ մի Աստվածություն, եւ խնդրում Քեզանից, Ով ամենառատ ողորմություն, որպեսզի այս կյանքում Քո անարժան ծառային այս հավատից անշեղ եւ հաստատուն պահես եւ զգաստություն ու արիություն տաս, որպեսզի այս նույն հավատքը կենդանի պահելու համար

ձեռք բերեմ առաքինի եւ Քեզ հաճելի գործերը: Եվ սրանից հետո թողնես ինձ այս նույն կենդանի հավատով գալ դեպի Քեզ եւ Քեզանից ընդունել Քո հավիտենական կյանքը, եւ Քո բոլոր սրբերի հետ փառավորել Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն հավիտյանս հավիտենից. Ամեն:

Ես, որ ազգությամբ հայ եմ, հավատով՝ քրիստոնյա, դավանությամբ եւ կրոնով՝ լուսավորչական, այս ճշմարիտ հավատքը եւ ուղիղ դավանությունը (որ ունեմ եւ ունենալու եմ կյանքում եւ մահվան ժամանակ) ընդունեցի մեր բազմերախտ եւ հոգեծին Հոր, Աստծո հատուկ վկա եւ Քրիստոսի տանչորսերորդ առաքյալ Սուրբ Գրիգոր Լուսավորչի միջոցով, որ մեզ լուսավորիչ ծագեց Սրբազան առաքյալներից եւ մեր ա-

ռաջին լուսավորիչներ Թադեոսից եւ Բարդուղիմեոսից, ովքեր երկուսն էին տասներկու Գլխավոր Առաքյալներից մեր Քրիստոս Աստծո, Որին փառք Հավիտյանս Հավիտենից. Ամեն:

Աղոթագրքի Հիշատակարան

Փառք անլռելի գոհաբանութեամբ եւ հավիտենական երկրպագութեամբ Ամենասուրբ Երրորդութեանը եւ մի Աստվածութեանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Որի առատաձիր ողորմութեամբ, ամենաբարի կամեցողութեամբ եւ մեր գթաշատ Հայր սուրբ Գրիգոր Լուսավորչի միջնորդութեամբ եւ օժանդակութեամբ, Սուրբ եւ Աստվածակերտ Էջմիածին Աթոռում մեր՝ սրբազան Հայրապետիս Տեր Սիմեոն Հոգնիմաստ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատվեց այս նոր տպագրատունը, որտեղ տպագրութեամբ լույս տեսավ Աղոթքների այս փոքրիկ Գիրքը՝ նույն Հայրապետիս կողմից նոր շարա-

հյուսված՝ Հայոց ազգի հոգեւոր մխիթարության եւ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու պարծանքի համար։ Քանի որ վերոհիշյալ մեր սրբազան Վեհի Հայրապետության եւ Սուրբ Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի հանճարոնակ եւ խոհեմափայլ Տեր Պողոս եւ Տեր Գրիգոր վարդապետների պատրիարքության ժամանակ եւ մեր Հայոց ՌՄԺԷ (1217) թվականին երկու մեծ թագավորների միջեւ մեծ պատերազմ սկսվեց եւ տեւեց մինչեւ մեր ՌՄԻԱ (1221) թվականը, որի մեջ ենք հիմա, ուստի ամբողջ աշխարհի մեծ մասը վրդովվեց, բոլոր տեղերում մրրիկ տարածվեց, եւ խռովության ալիքը պաշարեց ամենքին։ Այդ պատճառով շեն եւ անշեն վայրերում բազմացան գողերն ու ելուզակները, ապստամբները ու կողոպտիչները, կտրվեցին երթեւեկության ճանապարհները,

խափանվեց վաճառականների առեւտուրը, եւ Հասարակության ստորին խավը եւ մանավանդ Հայոց ազգը այնպիսի մեծ վտանգի եւ տառապանքի մեջ էր, որ մեր Հայրապետը տեսնելով այս մորմոքում էր եւ միշտ ցավում: Բայց այլ կերպ օգնություն ուղարկելն անհնար էր, ուստի իր ազգի օգնության եւ փրկության համար այս աղոթքի գիրքը լույս ընծայեց՝ մտածելով Սուրբ Հակոբոս Առաքյալի խոսքը, որ ասում է. «Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի եւ նրան կների իր մեղքերը»: Ուրեմն, դուք, որ պիտի ընդունեք այս նորաբույս ծաղիկը եւ նոր հասած այս պտուղը, նախապես ներեք սրա տհասության համար, որովհետեւ տպելու ժամանակ որոշեցինք վախճանին հասած աշխատողներին նախապես ավետաբեր լինել,

որովհետեւ սա իր պարագաներով ամբողջությամբ նո՛ր է եւ անփորձ։ Սրա գործավարները նույնպես անփորձ են եւ երբեք բոլորովին նման աշխատանք չէին տեսել։ Եվ ապա ձեր աղոթքներում հիշե՛ք վերոհիշյալ բարեմիտ եւ օգտաջան մեր Հայրապետին՝ հոգեւոր եւ մարմնավոր ծնողներով եւ իրենց բոլոր ընտանիքներով հանդերձ, եւ խնդրեցե՛ք Աստծուն, որպեսզի նրան երկար եւ խաղաղ կյանք տա՝ առավել եւս Սուրբ Աթոռի պայծառազարդության եւ Հայոց ազգի մխիթարության համար, որովհետեւ որքան նա նստել է Հայրապետական աթոռին, թեպետ ալեկոծյալ ժամանակի բերումով միշտ հոգնակերպ վշտեր ունի եւ հոգսեր է կրում, սակայն չի դադարում աթոռազարդ եւ ազգաշահ այսպիսի գործերից։ Որից հետո հիշե՛ք մեր Վեհի գործակալ եւ տե-

ղապահ Մկրտիչ Հանճարաշատ արքեպիսկոպոս Շոռոթեցուն, որ առանց Հեղինակի եւ ուսուցանողի՝ աստվածատուր իր շնորհքներով, այբուբենական մեր բոլոր գրերը՝ թե՛ բոլորատառ եւ թե՛ նոտրատառ, գլխագրերով եւ իրենց բոլոր պարագաներով հանդերձ նոր ի նոր փորագրեց պողպատի վրա, թափեց պղնձի վրա (ձուլեց) եւ արճճից լույս ընծայեց այս գեղեցկատես գրերը, որ տեսնում էք: Ստեղծելով տարբեր տեսակի գրեր եւ այս գործի անհրաժեշտ մյուս պարագաները՝ նա շարունակում է կատարելագործել: Նաեւ հիշե՛ք մեր Վեհի հոգեծին որդուն՝ գեղարքունիքցի Իսահակ շնորհաշատ վարդապետին, որ տառերը, բառերը եւ խոսքերը շարելիս եւ սրբագրելիս անձանձիր աշխատում էր, եւ գրեթե սա՛ է կանոնավորել այս ամբողջ գործը: Հիշե-

ցե՛ք եւ Էջմիածնեցի տիրացու Հարութիւնին, որ քանդակեց պատկերները, ձագագրերը, կանոններն ու ծաղկանիշերը եւ հարթեցրեց եւ կանոնավորեց կաղապարների մեջ եւ տպեց տպելիները։ Այլեւ միանգամայն հիշեցե՛ք մեր Վեհի հարազատ որդիներին եւ շնորհաւոր աշակերտներին՝ Հովսեփ վարդապետին եւ գրքի շարող Եփրեմ սարկավագին։ Նաեւ՝ Մկրտիչ վարդապետին, Հովհաննես աբեղային, Ներսես սարկավագին, առաջնթաց Վարդանին եւ այլ պաշտոնյաներին, որոնք բոլորը, բացի իրենց հատուկ պաշտոնից, սիրահոժար իղձով պաշտոնատարներ եղան նաեւ այս գործին։ Եվ մանավանդ ձեր աղոթքներում հիշեցե՛ք հիշեցման արժանի Ջուղայեցի եւ Հնդկաստանում բնակվող Ջակիկենց լուսահոգի Պարոն Միքայելի որդի, մեծահա-

վատ եւ բարեսեր Պարոն Գրիգոր իշխանազունին, ի Քրիստոս Հանգուցյալ նրա ծնողներ Միքայելին եւ Մամախաթունին եւ ի Տեր Հանգուցյալ իր դեռահաս որդի Միքայելին եւ նրա հին ու նոր մյուս բոլոր ննջեցյալներին, որովհետեւ այս բարեպաշտը, լսելով Սուրբ Աթոռում տպագրատան հաստատման մասին, հոժարությամբ հանձն առավ ձրիապես տալ սրա բոլոր ծախսերը, որպեսզի Աթոռում հաստատուն մնա այս Տպագրատունը՝ իր եւ յուրայինների հավիտենական հիշատակի համար: Մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ իր բոլոր սրբերի աղոթքներով Տերը թող օրհնի եւ իր կամքով ընդունի նրա հիշատակը, որին հիշողները կհիշվեն մեր Քրիստոս Աստծո կողմից. Ամեն:

Եկեղեցիներում Տեր ողորմյայի հետ ձայնով երգելի աղոթք

Արի՛ Աստուած Հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հա՛ ս յօգնութիւն ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց.
Տէր ողորմեա՛ , Տէր ողորմեա՛ :
Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ ծնօղիդ
Յիշեա՛ զՀեղումն արեան Փրկչիդ,
Է՛լ ի խնդիր փոքու Հօտիդ.
Տէր ողորմեա՛ , Տէր ողորմեա՛ :
Զի գիտացաք մեք Հաւաստեաւ
Որչափ մեղաց մերոց լրցաւ,
Ուստի Տէրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեաւ.
Տէր ողորմեա՛ , Տէր ողորմեա՛ :
Արդ, անկանիմք առաջի Քոյ,

Գոչեմք մեղայ Տեառնըդ մերոյ,
Դարձո՛ ի մէնջ զցասումն Քոյ,
Վասն անսպառ գթութեան Քոյ,
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛ :

Էջի դատարկ չմնալու համար

Եթե մեկը քեզ հարցնի, թե սրա գինն ի՞նչ է,
Կասես, թե սա անգին է, որ կրկնակիորեն ճշմարիտ է:
Որովհետեւ որպես նյութ՝ ոչինչ արժե, քանզի միայն վեցյակ թուղթ է:
Բայց քանի որ հոգիդ անգին է, սա քո հոգու կեցուցիչն է:
Ապա հիրավի անգին է, որ անգինին առողջ է պահում:
Ով հոգու գինը գիտի, նա՛ գիտի, թե սա ինչ արժե:
Իսկ ով հոգին չի ճանաչում, նրա համար նույնպես անգին է,

Որովհետեւ մեռելին երբեք չի օգնի դեղը, ինչքան էլ զորեղ լինի։

ՎԵՐՋ